Azg
armenian daily
7 ՆՈՅԵՄԲԵՐ 2001 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 203 (2407)

Նոյեմբերի վերջին «հռչակի» հանդիպում Մոսկվայում

Ակնկալվում է նաեւ Քոչարյան-Ալիեւ առանձին հանդիպում Պուտինի մասնակցությամբ

ԹԲԻԼԻՍԻ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Կովկասյան հռչակի»՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների հանդիպումը հավանաբար տեղի կունենա նոյեմբերի 30-ին Մոսկվայում: Այդ մասին Բաքվում լրագրողներին հայտնել է Ռուսաստանի արտգործնախարարության Կովկասի երկրների գծով գերատեսչության ղեկավար Ալեքսեյ Բորոդավկինը: Ըստ նրա, այդ հանդիպմանը նախատեսվում է քննարկել տարածաշրջանային համագործակցությանը եւ հակամարտությունների լուծմանն առնչվող հարցեր: Միաժամանակ Մոսկվայում ակնկալվում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Հեյդար Ալիեւի հանդիպումը, որոնք կքննարկեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիները: Դիվանագետը նշել է, որ ամենայն հավանականությամբ նրանց կմիանա Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ԵԱՀԿ Մինսկի համանախագահների հերթական այցը Ղարաբաղ տեղի ունեցավ հակամարտության շփման գծի մարդակերտյան հատվածով: Նախքան Բաքվից ժամանած պատվիրակությունը կհասներ սահմանը, տեղանքն ականազերծվեց: Ադրբեջանցի սակրավորների անփութության հետեւանքով տեղի ունեցավ ականի պայթյուն, ադրբեջանական բանակի մի սպա եւ երկու զինվոր ստացան տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Այս տհաճ միջադեպը, սակայն, վաս նախանշան չդարձավ այդ օրը Ստեփանակերտում կայացած պատշգամբային հանդիպման համար: Երեկոյան համանախագահներին ու պատվիրակության մյուս անդամներին ընդունեց ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը: Հանդիպմանը ղարաբաղյան կողմից մասնակցում էին նաեւ ԼՂՀ արտաքին գերատեսչության ղեկավար Նաիրա Մելքումյանը եւ պատշգամբության նախարար, գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանը:

Շուրջ մեկուկես ժամ տեւած հանդիպումից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահները եւ պատվիրակության անդամ, ՌԴ արտաքին գործերի առաջին փոխնախարար Վյաչեսլավ Տրուբնիկովը պատասխանեցին լրագրողների հարցերին: Համանախագահները կանխատեսված չէին նման

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀՈՒԿ նորաստեղծ ակումբ Մեծամորում

Այսուհետ Մեծամոր քաղաքում եւս գործելու է ՀՈՒԿ ակումբ: Վերջերս երդմնառության արարողությունն անցած եւ կուսակցության շարքերը համալրած մեծամորցիներին շնորհավորելու եւ անդամատոմսեր հանձնելու նպատակով Մեծամոր էին մեկնել ՀՈՒԿ փոխատենապետ Հարություն Առաքելյանը, գործիչ Կարեն Կակոյանը: Մինչ նորագիրներին անդամատոմսեր հանձնելը, Հարություն Առաքելյանի կնճահայրությամբ եւս երեք մեծամորցիներ դարձան ռամկավար: Այնուհետ նորագիր ռամկավարների եւ ՀՈՒԿ փոխատենապետի միջեւ երկխոսություն սկսվեց երիտասարդ կուսակցականները մտահոգված էին մեր իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններով, ինչպես նաեւ երկրի ապագայով: Նրանց հայկապես հետաքրքրում էր ՀՈՒԿ գիրքորոշումը մի շարք քաղաքական հարցերի վերաբերյալ:

Ընկեր Առաքելյանը եւս մեկ անգամ նշեց, թե կուսակցության հաստատակամ զարգացումն է մեր երկրի ճիշտ ուղին: Նա նկատեց, որ այդ միտումներն արդեն իսկ շոշափելի են, ինչը եւ պատճառ է, որպեսզի ՀՈՒԿ-ը գալիք ընտրություններին լուրջ նախապատրաստվի:

Մեծամոր քաղաքի բնակչության ճնշող մեծամասնությունն աջակցում է ԱԷԿ-ում: Էժանագին էլեկտրաէներգիա մատակարարելով ողջ հանրապետությանը (ի դեմ, պետական բաժին ցանցերի միջոցով) աշխատակիցները ամիսներով աշխատավարձ չեն ստանում: Իսկ էներգիան սպառվելով, տալիս է «կորուստներ», որը դեմ է ֆիզիկայի օրենքներին: Տպավորություն է ստեղծվում, թե Հայաստանում գործում են ֆիզիկայի այլ օրենքներ: «ԲԷՑ-երը հաստատ պետք է սեփականաշնորհվեն ոչ միայն կուսակցության ազատական գաղափարախոսությունից ելնելով, այլեւ նրանից, որ հստակ վերանա «մասնագետի» հաշվիչին դիմելու հնարավորությունը՝ այն հանձնելով համակարգչին: Ասվածի ապացույցը վերջերս «Ազգ» օրաթերթի անհիմն հոսանքազրկումն էր», նշեց Հարություն Առաքելյանը:

Ժողովին ընտրվեցին նաեւ «Մեծամոր» ակումբի վարչականները՝ ատենապետ Արտեմ Եղիշյանը, փոխատենապետ Արթուր Վիրաբյանը, ատենադպիր Մարգարիտա Նավասարդյանը, տնտեսական գանձապետ Արմեն Դավթյանը, խորհրդական Արթուր Հարությունյանը:

Նույն օրը Մեծամոր քաղաքում տեղադրվեց նաեւ ցուցանակ. մեծամորցիներին հնարավորություն կտրվի ընթերցելու **«Ազգի»** եւ տեղական «Խաղաղ ատամ» թերթերի համարները:

ՄԱՌԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ձախ ուժերը փորձում են դառնալ քաղաքական «երրորդ ուժը»

Սոցիալիստական կուսակցությունը հստակեցնում է քաղաքական դիրքորոշումները

Քաղաքական դաշտի աջ բեւեռում ակնհայտ անհամաձայնությունների ֆոնի վրա հակառակ ճամբարում միավորման գործընթացներ են: Նկատենք, որ նման միտումներ են դրսեւորվում հատկապես այն ուժերը, որոնք իշխանություն չեն ներկայացրել եւ նախընտրական պայքարի ելնելով եւ համատեղելով ուժերը փորձում են ստեղծել այնպիսի միավոր, որն իրենց բնորոշմամբ «երրորդ ուժ» դառնալով, լինի ոչ իշխանամետ եւ ոչ էլ ծայրահեղ ընդդիմադիր, կտանցնի քաղաքական նոր բարեփոխումների կուրսը եւ պատասխանատվությունը: Այս մասին ակնարկում է նաեւ Հայաստանի Սոցիալիստական կուսակցությունը, որը ուժերի դաշինքի ստեղծման կողմնակիցներից եւ նախաձեռնողներից է: Առաջ քաշելով քաղաքական դաշտում նոր անուններ ի հայտ բերելու գաղափարը, կուսակցությունը դաշինքին է տեսնում «երրորդ ուժի» դիրքերում, որը, ըստ ամենայնի, բարոյական առումով իրավունք ունի ներխուժելու ակտիվ քաղաքական պայքարի մեջ, հենց թեկուզ այն պատճառով, որ կուսակցության ղեկավար Մովսես Շահվերդյանը, 1998-ի նախագահական ընտրություններում իր վրա է վերցրել Կարեն Դեմիրճյանի նախընտրական քարոզարշավի ողջ բեռը: Այս առումով կարելի է արձանագրել, որ եւս մեկ կուսակցություն փորձում է խաղարկել Կարեն Դեմիրճյանի անունը՝ ի հակակշիռ ՀԺԿ-ի, որին Սոցիալիստական կուսակցության ղեկավարը ոչ ավել, ոչ պակաս կոնգլոմերաս համարեց, որը ստեղծվել է «նախընտրական ալիքի վրա»: Ըստ Շահվերդյանի կուսակցության հենց այդպիսին լինելու մասին է վկայել նաեւ ինքը Կարեն Դեմիրճյանը, որը ՀԺԿ-ն համարել է անարխիստների, սոցիալիստների, կոմունիստների, կապիտալիստների ինչ-որ խմբավորում: Դա խիստ իրատեսական գնահատական է, եթե հաշվի առնենք կուսակցության եւ ամբիցիաները, եւ շարունակական պառակտումները: Բացի այդ, սոցիալիստների նարը: Բացի այդ, սոցիալիստների նարը՝ ելնելով ՀԺԿ-ն երբեք քաղաքական կշիռ չի ունեցել, քանի որ որպես քաղաքական ուժ՝ ոչ մի նախաձեռնություն իր ուժերով չի կատարել: Իսկ այժմ ընդհանրապես անհասկանալի գործընթացների մեջ է մխրճվել ներկայիս նախագահ Ստեփան Դեմիրճյանի գլխավորությամբ, որին, ի դեմ, ըստ Շահվերդյանի, հայրն ամեն կերպ փորձում էր քաղաքականությունից հեռու պահել:

Փորձելով «երրորդ ուժի» դիրքերից գնահատել իրավիճակը, Շահվերդյանի կարծիքով, արմատական ընդդիմությունը միայն իշխանության վերադառնալու եւ միջանձնային հարաբերությունները պարզելու խնդիրներ ունի, որոնց հասնելու համար ընդդիմությունը խստականություն չի դնում հոկտեմբերի 27-ի շահարկման եւ զոհված առաջնորդների անունների օգտագործման միջեւ, որը բարոյական առումով թեկուզ ընդունելի չէ: Իսկ քաղաքական եւ քրեական առումներով նման շահարկումները լիովին անընդունելի են, քանի որ, Շահվերդյանի կարծիքով, եթե կոնկրետ փաստեր չկան, չի կարելի հրապարակավ մեղադրական հայտարարություններ անել, այն էլ այն դեպքում, երբ նման կեցվածք ընդունողները հենց նրանք են, ովքեր 1998 թ. իշխանության բերեցին Ռոբերտ Քոչարյանին, իսկ հիմա նրա պաշտոնանկությանն են նպաստել աշխատելու մինչեւ իր սահմանադրական լիազորությունների ավարտը եւ միայն նորմալ քաղաքական պայքարով իշխանության խնդիրներ լուծել: Հետաքրքրական է, որ այդ մասին խոսում է այն կուսակցության ղեկավարը, որը 1998-ին անվերապահորեն պաշտպանում էր Կարեն Դեմիրճյանին:

Ինչեւէ, Սոցիալիստական կուսակցության այս դիրքորոշումները որոշակի պատկերացումներ են տալիս ուրվագծվող դաշինքի հետագա կեցվածքի մասին: Սակայն, ըստ ամենայնի, այդ միավորման կազմավորման գործընթացները հարթ չեն ընթանա, եթե նկատի առնենք, որ ներկայիս Կոմկուսը եւս դաշինքի ստեղծման ջատագովներից է եւ որը, սակայն, լուրջ ներքին խնդիրներ ունի կապված իշխանամետ-ընդդիմադիր դիրքորոշումների ճշգրտման հետ, որի դրսեւորումների ականատեսը եղանք մենք: Եթե հակասությունների որդը մտնի նաեւ այս դաշինքի մեջ, ապա այսօր իսկ կարելի է խոսել եւս մի անհեռանկարային եւ տապալված քաղաքական միավորի ի հայտ գալու մասին:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ակնհայտ կեղծիքն ընդունվում է անթաքույց անտարբերությամբ

Սկիզբը էջ 1

Ավելին՝ որոշվում են հարցի քննարկման կողմերը եւ ժամկետները: Սակայն դրանից հետո 7 պատգամավորներ (6 ՀՅԴ ներկայացուցիչ եւ «Ժողովրդական պատգամավոր» խմբի ղեկավար Կարեն Կարապետյանը) հայտարարում են, որ իրենք չեն մասնակցելու նույն նախաձեռնությամբ երկրորդ ստորագրահավաքին, որի մասին այդ ընթացքում խորհրդարանում իրոք խոսակցություններ կային, եւ որը սակայն ընթացք չստացավ, քանի որ երեք հավելյալ ստորագրություններով արդեն առկա փաստաթուղթ-հայցադիմումը լիովին բավարար էր գործին ընթացք տալու համար: Ուշադրություն դարձնենք, որ բոլոր 7 պատգամավորները խոսում են ոչ թե առկա հայցադիմումի իրենց ստորագրություններից, այլ երկրորդ ստորագրահավաքից հրաժարվելու մասին, որն ընդհանրապես չէր էլ կայացել: Նոյեմբերի 7-ի առավոտյան, երբ արդեն հստակ էր, որ հաջորդ օրը հարցը քննարկվելու է, 7 պատգամավորները զարմանալիորեն նույն ձեւակերպումներով նամակ են հղում ՍԴ, նշելով, որ իրենք չեն կարող մասնակցել նոյեմբերի 6-ին նշանակված հարցի քննությանը:

Ընթացք տալով պատգամավորների նամակներին, ՍԴ-ն հրաժարվում է հարցը քննության առնել եւ պատճառաբանում, որ հայցադիմումը երկրորդ ստորագրահավաքի արդյունք է, որից պատգամավորները հրաժարվում են: Նույն օրը երեկոյան տեղեկանալով այդ մասին՝ Աժ պատգամավորներ Շ. Քոչարյանը, Գրիգոր Հարությունյանը եւ Ա. Սաղոյանը նամակ են ուղարկում ՍԴ, ըստ որի «...թվով 6 պատգամավորներ, գտնվելով թյուրիմացության մեջ եւ կարծելով, որ իբր նոր ստորագրահավաք է տեղի ունեցել, ՍԴ-ին ուղղված գրություններում իրավացիորեն նշում են, որ իրենք չեն մասնակցել տեղի չունեցած ստորագրահավաքին: Այս գրությանը ՍԴ-ից պատասխանում են, որ եթե նշված պատգամավորները ՍԴ դիմեն իրենց թյուրիմացության մեջ գտնվելու մասին խոստովանությամբ, հարցը կքննարկվի: Սակայն իրենց դիրքորոշման մասին պատգամավորները պարտավորվեցին հայտնել ՍԴ-ից դիմում ստանալուց հետո միայն: Իսկ իրենց պահվածքը բացատրեցին նրանով, որ երկրորդ դիմումը ներկայացնելուց առաջ նախաձեռնողները պիտի համաձայնեցնեին իրենց հետ:

ՍԴ-ն ողջ մեղքը բարդում է պատգամավորների վրա, որոնք իրենք հերթին ոչ մի կերպ չեն ցանկանում պատասխանատվություն կրել գործընթացի համար: Այժմ անհայտ է, այդ պատգամավորներն ուզո՞ւմ են ՍԴ-ն քննության առնի ակնհայտ կեղծիքով ընդունված սահմանադրականության հարցը, թե՞ կողմնակից են գործադիր իշխանության տեսակետին, ըստ որի օրենքի ընդունումը կխանգարի արդեն նախատեսված ԲԷՑ-երի վաճառքին: Սա սկզբունքային հարց է եւ սկզբունքային դիրքորոշում է պահանջում: Ի դեմ, գործընթացի վրա կարող է եւ ՍԴ-ի որոշումն ազդեցություն չունենալ, եթե Աժ քաղաքական մեծամասնությունը նույն անաչխատունակությունը չդրսեւորի օրենքի Աժ կողմից վերստին քննարկման եւ քվեարկության ժամանակը: Ի վերջո հենց «Միասնություն» խմբակցությունն աչք փակեց իրենց ներկայացրած Աժ նախագահ Արմեն Խաչատրյանի «աչքակապի» վրա, երբ նա պարզապես մնաստեղ տվեց փոխարեն քվեարկելու փաստը, որը հենց ճակատագրական եղավ ԲԷՑ-երի համար: Եվ տեսականորեն, եւ պրակտիկորեն հիմա էլ հնարավոր է նույն օրենքի ընդունումն արդեն առանց կեղծիքի, որից, սակայն, ոչ առանց պատճառի իշխանությունը վախենում է: Խնդիրն այն է, որ ՍԴ որոշումից հետո Արմեն Խաչատրյանը մեղադրվելու է պաշտոնական դիրքի չարաշահման մեջ, նրա նկատմամբ օրենքի ուժով քրեական գործ պետք է հարուցվի, որը քաղաքական լուրջ վերադասավորումների կհանգեցնի խորհրդարանում:

Ամեն դեպքում, խորհրդարանը եւ առանձին քաղաքական ուժեր հերթական անգամ փաստում են այս խորհրդարանի հեղինակազրկումը: Արշակ Սաղոյանը հենց դա նկատի առնելով ռեալիկ արեց, թե ինչպես է ուզում այս խորհրդարանը նախագահի իմփիչմենթի հարց լուծել, երբ խուսափում է օրենքների բացահայտ կեղծիքով ընդունվելու փաստը մերկացնելուց եւ գնահատական տալուց:

Ուսումնասիրվում է Դեբեդ գետի ձկների զանգվածային թունավորման դեպքը

ԵՐԵՎԱՆ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Միջոցներ են ձեռնարկվել Դեբեդ գետում երեկ ձկների զանգվածային թունավորման պատճառները պարզելու համար: Ինչպես այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ բնապահպանության փոխնախարար Ալֆրեդ Ներսիսյանը, Լոռու մարզ են մեկնել նախարարության լաբորատորիայի ներկայացուցիչները՝ տեղում համապատասխան հետազոտություններ իրականացնելու նպատակով:

Փոխնախարարի կարծիքով, այս դեպքը կապված է գետ լցվող թունավոր արտանետումների հետ:

Դպրոցների կառավարման նոր համակարգ

ԵՐԵՎԱՆ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանի բոլոր դպրոցները մինչեւ 2005 թվականը կանցնեն կառավարման նոր համակարգի, ըստ որի, դպրոցները կկառավարվեն խորհուրդների կողմից, իսկ ֆինանսավորումը պետբյուջեից կհատկացվի աշակերտների թվին համապատասխան: Ինչպես տեղեկացավ Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության պետի տեղակալ Սաշիկ Ղուլանյանից, նշված ծրագիրն ընթանում է փուլ առ փուլ: Մասնավորապես, նոր համակարգի անցնելու կապակցությամբ հոկտեմբերի վերջին Աջափնյակ եւ Շենգավիթ համայնքների 57 դպրոցների տնօրենների համար կազմակերպվել էին դասընթացներ, նման դասընթացներ կկազմակերպվեն նաեւ դպրոցների այլ աշխատակիցների համար: Ըստ Ղուլանյանի, նշված դպրոցների կառավարման նոր համակարգի անցնելուց հետո Երեւանում դրանց թիվը կհասնի 100-ի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժամ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական եւ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի

Սկիզբը էջ 1

Լրագրողների հետ առաջինը ելույթ մեջ մտած Վ. Տրուբնիկովը նշեց, որ ԵԱՀԿ-ն բնավ չի սպառել խաղաղարար իր ներուժը: Եթե դա այդպես լիներ, շեշտեց ռուս դիվանագետը, ապա նախօրյակին Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևն իրենց հետ 3,5 ժամ շահագրգիռ զրույց չէր ունենա: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ համանախագահները մտածում են նոր առաջարկների շուրջ՝ նոր գաղափարներ մշակելով հիմնախնդրի խաղաղ լուծման ուղղությամբ, այնպես որ գործընթացը կա:

Ստեփանակերտում առաջին անգամ գտնվող Ռուդոլֆ Պերինային հարց տրվեց՝ սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԵԱՀԿ խաղաղասիրությունը փոխվե՞լ է: Հարցին ի պատասխան, ամերիկացի դիվանագետը նշեց, որ Նյույորքյան ողբերգությունից հետո աշխարհն ընդհանրապես փոխվել է, որն, անտարակույս, կանդրադառնա նաեւ ղարաբաղյան կարգավորման վրա: Սակայն ի՞նչ ձեւով, առայժմ վաղ է ասել:

Ֆրանսիացի համանախագահ Ֆիլիպ դը Սյուրմենը կարեւորեց Փարիզում եւ Քի Վեսթում ձեռք բերված պայմանավորվածությունները՝ դրանց արդյունքները դիտարկելով իբրեւ բազիս հետագա բանակցությունների համար:

Համանախագահները բարձր գնահատեցին Ա. Ղուկասյանի հետ իրենց հանդիպումը, նշելով, որ օգտակար հանդիպում էր: Այս գոհունակության ֆոնի վրա «Ազգի» թղթակցի տված հարցին՝ Ղարաբաղը դիտո՞ւմ են նրանք իբրեւ հակամարտության կողմ, համանախագահները խուսափեցին ուղղակի պատասխանից: Մասնավորապես Ֆ. դը Սյուրմենը, շրջելով հարցի բովանդակությունը, ընդգծեց հակամարտության մեջ մտած դրացի երկու ժողովուրդների խաղաղության ձգտումը եւ իրենց ջանքերն այդ հարցում: Նա անկարեւոր համարեց Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւի վերջերս արած ռազմաշունչ հայտարարությունը ղարաբաղյան կարգավորման առնչությամբ, ասելով, որ նախօրյակին կայացած հանդիպման ժամանակ Հ. Ալիեւը բացառապես խաղաղ կարգավորման դիրքորոշմամբ է հանդես եկել, ինչը շատ դրական է բանակցություններն արդյունավետ շարունակելու համար:

Լրագրողների հետ հանդիպումից ասուլիս անցկացրեց նաեւ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը: «Կարեւորն այն է, որ համանախագահողները հաստատեցին, որ իրենք Բաքվում շատ լուրջ բանակցություններ են վարել Ալիեւի հետ, եւ վերջինս հաստատել է, որ հարցի լուծումը չի տեսնում պատերազմի միջոցով», նշեց Ա. Ղուկասյանը:

Համանախագահների հեռահանդիպումը բարձր գնահատելով, ԼՂՀ նախագահը տեղեկացրեց, որ իրենք ընտրել են այն հնարավոր քայլերը, որոնք կաջակցեն վստահության մթնոլորտի ստեղծմանը տարածաշրջանում: Դրանք կարող են լինել փոքր եւ միջին քայլեր, բայց հնարավորություն կստեղծեն հետագա խաղաղ քայլերի ամրապնդմանը: Մինսկի խումբը, ըստ ԼՂՀ ղեկավարի, շարունակելու է աշխատանքը: Ենթադրվում են նոր հանդիպումներ, որոնք հաջողությունների հույս են պարունակում:

Համանախագահները նոր առաջարկություններ չեն բերել Ստեփանակերտ, նշեց Ա. Ղուկասյանը, դրանք ավելի շուտ հին առաջարկների մոդիֆիկացիաներն են, որոնք կարող են ընդունելի լինել բոլոր կողմերի համար: «Այն հիմքը, որը համաձայնեցված էր նախկին բանակցությունների ժամանակ, այսօր փորձում են զարգացնել, վերափոխել, հաշվի առնելով, որ դեռ կան խոչընդոտներ», ասաց նա:

Անդրադառնալով այն հարցին, թե ե՞րբ կարող է ԼՂՀ-ն ընդունվել որպես հակամարտության կողմ եւ մասնակցել բանակցություններին, Ա. Ղուկասյանը նշեց, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր համանախագահները հասկանում են Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի հիմնական հակամարտող կողմեր լինելը, քանի որ ոչ մի հարց չի կարող լուծվել առանց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ու իշխանությունների կարծիքի: «Բնական է, այդ փաստը կախված չէ այս կամ այն քաղաքական գործչի գաղափարներից: ԼՂՀ-ն ռազմաքաղաքական գործոն է տարածաշրջանում, եւ կամ չունի՝ դա Ադրբեջանի ղեկավարությանը դո՞ւր է գալիս, թե՞ ոչ: Ես համոզված եմ՝ մեր ժողովրդի համար կարեւորը խաղաղությունն է, եւ մենք պետք է կարողանանք ամրապնդել այս զինադադարը, հասնել խաղաղության եւ պաշտպանել մեր դիրքորոշումները: Իսկ մեր դիրքորոշումները շատ հստակ ու պարզ են. ԼՂՀ-ն անկախ պետություն է, եւ մենք պիտի կարողանանք ամրապնդել մեր անկախությունը», եզրափակեց ԼՂՀ նախագահը:

ԱՍՈՒԼԻՍ

«Նախ պիտի տեսնել փոփոխությունների չափը, տեսակը, որակը»

ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկությունների վերաբերյալ ասաց Վարդան Օսկանյանը Լաստվիայի ԱԳ նախարարի այցն ամփոփելիս

«Այս այցը կարեւոր քայլ էր Լաստվիայի եւ առհասարակ բալթյան երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման համար, քանզի գտնում ենք, որ անկախությունից հետո առաջին 8-9 տարիները կորցրել ենք պատմական ամուր հիմք ունեցող հարաբերությունները չզարգացնելով», Լաստվիայի արտգործնախարար Ինդուլիս Բերզինշի՝ երեւան կատարած այցի ամփոփմանը երեկ նշեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, վարչապետի եւ իր հայ գործընկերոջ հետ հանդիպումների արդյունքում ստորագրվեց երկու փաստաթուղթ՝ համատեղ հայտարարություն եւ ավտոտրանսպորտային փոխադրումների վերաբերյալ միջկառավարական համաձայնագիր:

Լրագրողների հետ համատեղ հանդիպմանը Վ. Օսկանյանը նշեց, թե սեպտեմբերի 11-ից հետո աշխարհում ստեղծված նոր իրադրությանը, երկու տարածաշրջաններին վերաբերող խնդիրների քննարկումից զատ, իրենք շեշտը դրել են երկկողմ հարաբերությունների զարգացման վրա՝ մասնավորապես տնտեսական համագործակցության: Ի. Բերզինշն այս առումով ընդգծեց, թե Լաստվիան պատրաստվում է դառնալ մեծ Եվրոպայի անդամ եւ, փաստորեն, համագործակցությունը Լաստվիայի հետ Հայաստանի համար կնշանակի համագործակցություն Եվրոպայի հետ: Այսպես, Ի. Բերզինշի հավաստմամբ, այս տարի ՆԱՏՕ-ի Պրահայում գումարվելիք գագաթաժողովին Լաստվիան կստանա այդ կառույցին անդամակցելու հրավեր:

Մինչեւ 2004-2005 թթ. նախատեսվում է Լաստվիայի անդամագրումը նաեւ Եվրամիությանը: Գալով Լաստվիայի որպես եվրոպական մեծ ընտանիքի անդամի հետ Հայաստանի տնտեսական փոխգործակցության կոնկրետ հեռանկարներին՝ Վ. Օսկանյանն առանձնացրեց ինֆորմացիոն տեխնոլոգիաների, թեթեւ արդյունաբերության ոլորտները: Ի. Բերզինշը կրկնելով ինֆորմացիոն տեխնոլոգիաները Հայաստանում Լաստվիայի հետաքրքրությունների շարքում, նշեց նաեւ բանկային ոլորտը:

«Եթե ճիշտ քայլեր ձեռնարկենք եւ պայմաններ ստեղծենք, լուրջ հարաբերություններ կարելի է զարգացնել տնտեսության բնագավառում, անգամ մշակույթի», ամփոփելով ՀՀ արտգործնախարարը:

Քանի որ մամլո ասուլիսը համընկավ երեկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների երեւան ժամանումը, լրագրողներին հետաքրքրում էին ՀՀ արտգործնախարարի հետ վերջիններիս հանդիպման արդյունքները: «Մենք ընդհանուր բնույթի քննարկում ունեցանք առանց մանրամասների մեջ մտնելու: Մանրամասներ կինչեն վաղը՝ ՀՀ նախագահի հետ համանախագահների հանդիպման ընթացքում: Իսկ այսօրվա զրույցում մենք շեշտեցինք վստահություն ներշնչող քայլերի ձեռնարկումն ու ձեռք բերեցինք պայմանավորվածություններ», ասաց ՀՀ արտգործնախարարը: Պարզաբանելով «վստահություն ներշնչող քայլեր» արտահայտությունը՝ Վ. Օսկանյանը դրանց թվում նշեց պատերազմի վերսկսման հայտարարություններից զերծ մնալը:

«Կարծում եմ՝ այսօրվա դրությամբ սա գործընթացի ամենակառուցողական քայլերից կլինի»: Այս համատեքստում արտգործնախարարը կարեւորեց Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան սահմանագծում երկու բանակների հրամանատարությունների միջեւ կապի ուժեղացումը, «որպեսզի ոչ միայն խոսքով, այլեւ գործով խախտումներ չլինեն»: Որպես փոխվստահության ստեղծման օրինակ պրն Օսկանյանը բերեց նաեւ Հայաստան-Ադրբեջան սահմանագծին ջրային ռեսուրսների համատեղ օգտագործումը: «Կան այսպիսի բազմաթիվ քայլեր, որոնք հնարավոր է իրականացնել: Հույս ունենք, որ կկարողանանք անել դա եւ դրանով իսկ առավել արդյունավետ հող ապահովել ԼՂ խնդրի խաղաղ կարգավորման համար», վստահեցրեց ՀՀ արտգործնախարարը:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունեց Լաստվիայի արտգործնախարար Ինդուլիս Բերզինշին:

Գալով ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկությունների փոփոխությունների վերաբերյալ՝ համանախագահների Բաքվում եղած ժամանակ արված հայտարարություններին, պրն Օսկանյանը նախ գոհունակություն հայտնեց, որ գործընթացը փարիզյան եւ Քիվեսթյան հունում է, հետո նշեց. «Եթե փոփոխություններ լինեն, նախ պիտի տեսնել դրանց չափը, տեսակը, որակը եւ միայն դրանից հետո որոշել՝ դրանք իրականում փոփոխությունն՞ե՞ր են, թե՞ ոչ»:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

IESC-ն որոշել է կայացնել մի ոլորտ, որն արդեն իսկ կայացած է

Ուսկեգործության ու ակնագործության աջակցման ծրագրի արժեքն այդպես էլ չհրապարակվեց, գուցե կոմերցիոն գաղտնի՞ք էր...

Երեկ Արմենպրեսի մամուլի սրահում Միջազգային գործադիր ծառայությունների կորպուսի (IESC) հայաստանյան գրասենյակը հրավիրել էր ասուլիս՝ պատմելու իր ծրագրերից մեկի՝ «Բիզնեսլինքի» ենթածրագրի մասին, որը կոչվում է «Ուսկեգործության ու ակնագործության աջակցման ծրագիր»: Մինչ ասուլիսի սկսվելը, որը ձգձգվում էր Արմենպրեսի տնօրենի ուշացման պատճառով (նա այդպես էլ չեկավ՝ ասուլիսը վարելու, IESC-ի տնօրեն Լիսա Սկորսոլինին եւս հրաժարվեց հարցերին պատասխանելուց՝ իջնելով բեմից ու տեղ զբաղեցնելով լրագրողների կողքին. եթե ազգանունը սխալ ենք նշում, ապա խնդրում ենք ներողամտություն, քանի որ չհասցրեցինք կարդալ ցուցակը, որը IESC-ի տնօրենը իջեցրեց ներքեւ), լրագրողներիս բաժանվեց մամլո հաղորդագրություն, որի մասին էլ չենք կարող չնշել, որ գրված էր բավական անգրագետ հայերենով՝ ակնառու ոճական, կետադրական եւ ուղղագրական սխալներով: Ըստ այդ հաղորդագրության, «Բիզնեսլինքը» IESC-ի մի մասն է, որի նպատակն է զարգացնել արտահանման ծրագրերը Հայաստանում՝ դառնալով «հայ արտադրողի կամուրջը դեպի ամերիկյան շուկա»: Ծրագրում ընդգրկվելու են արտադրողներ, որոնց համար կատարվելու են հետեւյալ քայլերը կետ առ կետ՝ ապահովել ընտրված ձեռնարկությունների մասնակցությունը Միացյալ Նահանգներում անցկացվող խոշորագույն ոսկեգործական ցուցահանդեսներում, մշակել առավել արդյունավետ գնային քաղաքականություն, ստեղծել ամերիկյան գնորդների տվյալների բազա, իրականացնել ակտիվ գովազդային գործունեություն, կնքել պայմանագրեր մեծածախ գնորդների հետ, ապահովել ոսկերչական արտադրության առաքումը Հայաստանից Միացյալ Նահանգներ, ապահովել վճարումները արտադրանքի դիմաց: Կարճ ասած, բավականին խոստումնալից նպատակներ: Ավելին «Բիզնեսլինքի» տնօրեն Արմեն Շահբազյանն իր բանավոր խոսքում չկարողացավ ասել՝ չնայած լրագրողների հարցերին: Պրն Շահբազյանի պատասխանները հիմնականում սկսվում էին հետեւյալ նախադասությամբ. «Ես չեմ կարող ասել»: Մասնավորապես, այդպես էլ հնարավոր չեղավ իմանալ, թե ի՞նչ արժե ԱՄՆ USAID-ի կողմից ֆինանսավորվող ծրագիրը, նաեւ այն, թե ամերիկյան ահաբեկչություններից հետո ամերիկյան շուկայում ոսկու եւ ադամանդի պահանջարկի կտրուկ անկման պայմաններում ինչպե՞ս են պատրաստվում խորհուրդներ տալ հայաստանցի գործարարներին, որքանո՞վ լուրջ կընդունվի իրենց խորհրդատվությունը, կամ թե՝ ինչո՞ւ է հատկապես ընտրվել ադամանդագործության ու ոսկեգործության ոլորտը, որն առանց այն էլ ձեւավորված ոլորտ է եւ բավականին սպեցիֆիկ, հատկապես ադամանդագործությունը, որտեղ ամեն ինչ հիմնված է բանավոր պայմանավորվածությունների, գործընկերների փոխադարձ վստահության վրա, եւ որեւէ ընկերություն Հայաստանում չի կարող հիմնվել՝ առանց ունենալու իր մոտակա տարիների երաշխիքային բիզնես պլանն ու կոնկրետ պայմանավորվածությունները: Ի դեպ, այդ հարցին ի պատասխան նշվեց, որ «Բիզնեսլինքը» որոշել է աջակցել ոլորտին, քանի որ «Հայաստանում կան բավարար չափով մասնագետներ, սարքեր ու սարքավորումներ, եւ արտադրանքը մրցունակ է: Խոստովանենք, որ առավել քան զարմանալի պատասխան է, որին անդայման պետք է հետեւի հարցը՝ այդ դեպքում ինչո՞ւ է կազմակերպությունը որոշել կայացնել մի ոլորտ, որն Հայաստանում ամենաիչ օժանդակության կարիք ունի եւ ամենակայացածներից մեկն է, կամ ի՞նչ խորհրդատվություն պետք է տան ծրագրի մասնագետները, որոնք, ինչպես խոստովանեց Ա. Շահբազյանը, իրենք են հանդիպել մի քանի խոշոր ոսկերիչների հետ ու «փորձել նրանցից մախսիմալ տեղեկություններ ստանալ միջազգային շուկայի միտումների մասին»: Եվ վերջապես հարց, խոսքը չի՞ վերաբերում արդյոք մի սովորական մակլերին կամ միջնորդական կազմակերպությանը, որը պետական աջակցության գումարներով փորձ է անելու իրականացնել առեւտրային գործունեություն: Այս եւ այլ հարցերին ոչ բավարար պատասխանելու համար վերջում Շահբազյանը ներողություն խնդրեց՝ խոստանալով ավելի բավարար ինֆորմացիա տրամադրել նոյեմբերի 28-ին տեղի ունենալիք ծրագրի շնորհանդեսին:

Մի խոսքով, ասուլիսի վերջում այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ ոսկերչության ու ակնագործության ոլորտի աջակցմանը «լծվածները» ոչ թե իրենք պետք է խորհրդատվություն տան ոլորտի ընկերություններին, այլ, թերեւս, վերջիններս պետք է խորհուրդներ տան նրանց: Ավելին՝ հարցուպասխանից էլ պարզ դարձավ, որ սրահում հավաքված տնտեսական թեմաներով գրող լրագրողները, թերեւս, ավելին գիտեին ոլորտի մասին, քան «Բիզնեսլինքի» ներկայացուցիչները: Նշենք միայն մեկ աղացույց: Մամլո հաղորդագրության մեջ նշված է, որ ոսկերչության ու ակնագործության ոլորտը ՀՀ արտահանումների ընդհանուր ծավալում գրավում էր երկրորդ տեղը, մինչդեռ պետք էր բացել ընդամենը վիճակագրական ազգային ծառայության վերջին տվյալները, ըստ որոնց այդ ոլորտը արտահանումների ծավալում մոտ 40 տոկոս իր մասնաբաժնով շարունակում է զբաղեցնել առաջին տեղը:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Հ. Գ. Իր հարցի պատասխանից չբավարարված լրագրողներից մեկը սխալված էր զարմացած բացականչել. «Ինչո՞ւ եք հրավիրել մեզ, եթե ոչ մի հարցի չեք կարող պատասխանել»: Մենք էլ սխալված ենք այդ նույն հարցը տալ Արմենպրեսի տնօրինությանը. «Ինչո՞ւ էր հրավիրվել ասուլիսը, եթե գրեթե ոչինչ

Սոչահեղների եւ չեչենների հատուկ զորախմբեր պահած Ադրբեջանն ինքն է զառանցում «հակաահաբեկչության» մասին

Վերջին ժամանակներս Ադրբեջանը զանգվածային քարոզչական արշավ է ծավալել, որի նպատակն է Հայաստանը ներկայացնել իբրեւ ահաբեկչական երկիր, իսկ Լեռնային Ղարաբաղը որպես ահաբեկիչների, թմրագործների եւ այլ հանցավոր տարրերի ապաստարան:

Ադրբեջանի բազմաթիվ քաղաքական գործիչներ եւ տարաբնույթ քաղաքագետներ, կարծիք հայտնելով, թե Մինսկի խմբի եւ բանակցությունների շրջանակներում անհնար է Ղարաբաղի հարցը լուծել բացառապես իրենց համար ձեռնտու պայմաններով, սկսել են ինքնակոչ Լեռնային Ղարաբաղի դեմ այսպես կոչված «հակաահաբեկչական գործողություն» անցկացնելու հնարավորությունն ու նպատակահարմարությունը:

Ադրբեջանը ձգտում է տարածաշրջանի համար խիստ պայթյունավտանգ այս արկածախնդրության մեջ ներքաշել նաեւ Թուրքիային: Այդ է վկայում վերջերս Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Քըվրըքօղլուի հետ հանդիպման ժամանակ Ղարաբաղի հակամարտության ուժային լուծման վերաբերյալ Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆեթի արած հայտարարությունը, ինչպես նաեւ Թուրքիայի խորհրդարանի անդամ Բյուլենթ Մաչալիի հայտարարությունը տվյալ գործողությանը թուրքական կողմի հնարավոր մասնակցության վերաբերյալ, «եթե Ադրբեջանը կարողանա ապացուցել, որ Հայաստանը մասնակից է Ադրբեջանում, այդ թվում Լեռնային Ղարաբաղում իրականացված ահաբեկչություններին»:

Այս առումով ուշադրության է արժանի նաեւ Մինսկի խմբին հենց Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի ներկայացրած վերջնագիրը, որը ԵԱՀԿ նախագահ Ադրիան Սեւերինի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ «եթե խումբը սկզբունքային դիրք չբռնի» Ղարաբաղի հակամարտության մեջ, ապա Ադրբեջանը կսկսի «պատերազմ՝ հանուն իր գրավյալ հողերի ազատագրման»:

Լեռնային Ղարաբաղի դեմ մարտական գործողություններ սկսելու վերաբերյալ այս բոլոր կոչերում ու հայտարարություններում մեծ չափով առկա է ահաբեկման տարրը, որի նպատակն է բանակցությունների ընթացքում որոշակի ճնշում գործադրել հայկական կողմի վրա եւ նրան ստիպել առավել գիջող լինել:

Աշխարհի որեւէ կետում իրականացվող յուրաքանչյուր ահաբեկչական քայլի կամ աղմկալի սպանության մեջ ադրբեջանցիները փնտրում են «հայկական հետք», եւ զարմանալի չէ, որ ԱՄՆ-ում իրականացված ահավոր ահաբեկչություններից հետո, կարծելով, թե եկել է հարմար պահը, Ադրբեջանն ուժեղացրեց իր հակահայկական արշավը:

Հայաստանի տրամադրության տակ եղած բազմաթիվ փաստերը վկայում են հակառակը: Ադրբեջանը պաշտոնական մակարդակով կաղ է պահպանել աֆղան մոջահեդների հետ, եւ հազարավոր վարձկան մոջահեդներ, ինչպես նաեւ չեչեն գրոհայիններ Լեռնային Ղարաբաղի մարտական գործողություններին մասնակցել են Ադրբեջանի պաշտպանության նախարարության սնուցաբաժանումների կազմում:

Հավաստի տվյալներով, որոնք հաստատվում են նաեւ վավերական նյութերով, Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ժամանակ աֆղան մոջահեդներից եւ չեչեն գրոհայիններից կազմավորվել էին այսպես կոչված հատուկ զորախմբեր, որոնց գլխավոր խնդիրը պատժիչ եւ ահաբեկչական գործողությունների իրականացումն էր: Հիշյալ հատուկ զորախմբերը կազմավորվում էին Ժդանովի շրջանի Դոլիբուրուն գյուղում, Շամխորի շրջանի Սեյֆուլի վայրում, Ալի Բայրամլի գյուղում, Ադրբեջանի Եվլախի շրջանի տարածքում: Բաքվի կենտրոնում «Աստերն» հյուրանոցում հատկապես ստեղծված էր գրասենյակ, որը հավաքագրում էր վարձկաններին եւ նրանց այնտեղ տեղավորում մինչեւ համապատասխան զորամասեր ուղարկելը: Հատուկ զորաբաժնի հետ աշխատելու համար հավաքների էին կանչվել տասնյակ թարգմանիչ սպաներ:

Առկա փաստաթղթերի համաձայն, վարձկաններից յուրաքանչյուրը մարտական գործողություններին իր մասնակցության համեմատ, ամսական ստանում էր 700-1000 ԱՄՆ դոլար: Անհետաձգելիորեն կատարվում էին հատուկ զորաբաժնի հրամանատարների պահանջները, որոնք վերաբերում էին իրենց պարենային հավելյալ արտոնությունների տրամադրմանը, անձնական օգտագործման փոխադրամիջոցների հատկացմանը եւ այլն: Հատուկ զորաբաժնի գոյության ակնբախ ապացույցներն են հրամանների պատճենները, լուսանկարները, նամակները, ուսումնական տետրերը, ինչպես նաեւ Ադրբեջանի նախագահ Ալիեւի եւ ԱՀ գլխավոր շտաբի պետ Սադիխովի գրույցի ձայնագրությունը:

Ադրբեջանի հատուկ ծառայությունները բանիցս ահաբեկչական քայլեր են իրականացրել Հայաստանի եւ ԼՂՀ-ի սահմաններում, ինչպես նաեւ Վրաստանի Մառնեուլի շրջանում, Հայաստան մտնող հաղորդակցությունների գծերի վրա: Միայն 1993-94 թթ. գազամուղի ուղեգծում տեղի է ունեցել 13 պայթեցում: 1994, 1995 եւ 1996 թթ. ահաբեկչություններ են իրականացվել ՀՀ Նոյեմբերյանի շրջանի Բագրատաշենի սահմանամերձ շուկայում: Շուկայում կազմակերպված պայթեցումների հետեւանքով զոհվել են տասնյակ մարդիկ, շատերը ծանր խեղումներ են ստացել:

Բայց Ադրբեջանի հատուկ ծառայությունները միայն ահաբեկչական քայլերով չէին բավարարվում: Ադրբեջանի բանտերում եւ համակենտրոնացման ճամբարներում հայ ռազմագերիների եւ պատանդների հանդեպ գոյություն ունեցող դաժան, անմարդկային վերաբերմունքին կարող էին «նախանձել» ինկվիզիցիայի ժամանակների դահիճները: Դրա ցայտուն օրինակը նախկին ռազմագերի Տիկո Տիկոյանի ինքնասպանությունն է, որը ադրբեջանցիների ձեռքից ոմանք գերի էր 2000 թ. մայիսի 30-ից մինչեւ հուլիսի 28-ը:

Ակնհայտ է, որ ձգտելով քողարկել իր ահաբեկչական գործունեությունը, Ադրբեջանը հայկական կողմին է մեղադրում՝ ակնկալելով միջազգային հանրության համաձայնությունը: Հորինվում են հանցանքաններ, նենգափոխվում ու խեղաթյուրվում են փաստերը, աղավաղվում են համատարած ահաբեկչության եւ թմրադեղերի տարածման դեմ պայքարելու վերաբերյալ ԱՄՆ պետդեպարտամենտի զեկուցագրերը, վկայակոչվում են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ԵԱՀԿ ղեկավարների գոյություն չունեցող հայտարարությունները:

Այդ կարգի վերջին գործը ոմն Նովրուզօղլուի «հետազոտություններն» են, որոնց համաձայն «հայկական ահաբեկչական կազմակերպությունները» կազմել են 48 ադրբեջանցիների ցուցակ, որոնց դեմ իբր մահափորձեր են նախապատրաստում: Իհարկե, չենք ուզում դուրս գալ լրագրողական բարոյագիտության շրջանակներից, բայց հազիվ թե հաջողվի ադրբեջանական ՁԼՄ-ների հերթական կեղծագիրը գնահատել ավելի մեղմ բառով, քան զառանցանք է: Նույն բնորոշումը վերաբերում է Նովրուզօղլուի «հետազոտության» նաեւ այն մասին, որտեղ նա որպես մեկ ամբողջություն է ներկայացնում Հայ դատը (1915 թ. Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված նրա գործունեությունն ավելի ու ավելի լայն ճանաչում է ստանում միջազգային հանրության մեջ), ԱՍԱԼԱ-ն (իր գործունեությունը դադարեցրած այդ կազմակերպության առնչությամբ ադրբեջանական ՁԼՄ-ների մշտական մարմաջը արդեն դուրս է գալիս ինքնակման շրջանակներից) եւ Ցեղակրոնը (այս կազմակերպությունը երբեք չի մտածել անլեգալ դրության մասին եւ դուրս չի եկել հայկական պետականության լուսավորչական գաղափարի շրջանակներից):

Բաքվում ամենահիսկական որս է սկսվել այլազգիների հետ ամուսնացած հայերի եւ այն ադրբեջանցիների դեմ, որոնց երակներում հայկական արյուն է հոսում: Հայ «լրտեսների եւ ահաբեկիչների» մերկացմանը զգալի տեղ է հատկացվում Ադրբեջանի հատուկ ծառայությունների քարոզչական ձեռնարկումներում: Այսպես, 2001 թ. գարնանը դրանց «արգասավոր գործունեության» ցուցադրման նպատակով ընտրվեց ոմն Աղասյան Ռայա: Զանգվածային լրատվամիջոցներում բերվող տվյալների համաձայն, որոնք վկայակոչում են Ադրբեջանի ՆԳՆ եւ ԱԱՆ աղբյուրները, վերջինս 20 տարեկան է, ՀՀ քաղաքացի է, Երեւանի բնակիչ եւ 1994 թ.-ից գործում է Բաքվում (ուշադրություն դարձրեք տարիքին. այսինքն՝ 13 տարեկանից): Հայաստանի գոյություն չունեցող քաղաքացուհու վերաբերյալ թխված նյութերն այնքան պարզունակ էին եւ հակասական, որ Աղասյան Ռայայի լրտեսական գործունեության մերկացումը զարգացում եւ պաշտոնական հաստատում չգտավ:

Հայաստանի դեմ կազմակերպված ակտիվ քարոզչությունը չէր կարող հիմնվել միայն տվյալների նենգափոխման վրա. այն պահանջում էր կոնկրետ փաստեր եւ որքան սենսացիոն, այնքան ավելի լավ: Հենց այդ պատճառով ժամանակ առ ժամանակ սկսեցին Հայաստան գալ անձինք (Ի. Ախունդով, Ռ. Աբժանիձե, Գ. Ալաղաշվիլի, Մ. Օջավերդիեւ եւ ուրիշներ), որոնք իբր իրենց երկար տարիներ հալածանքների ու զրկանքների ենթարկած Ադրբեջանի իշխանությունների հանդեպ ատելության զգացումից դրդված իրենց ծառայություններն էին առաջարկում Ադրբեջանում հետախուզական գործունեության իրականացման, ինչպես նաեւ ահաբեկչական քայլերի ու դիվերսիաների կազմակերպման, այդ թվում քաղաքացիական բնակչության ֆիզիկական ոչնչացման գործում:

ՀՀ ԱԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՍՈՒԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

907 հոդվածն ու Հայոց ցեղասպանությունը սոսկ չեն չարչրկվել, այլեւ սակարկվել են Թուրքիայի եւ ԱՄՆ-ի միջեւ

Վերջին շրջանում հայաստանյան եւ սփյուռքահայ մամուլը հաճախակի էր անդրադառնում ինչպես 907 հոդվածի վերանայման, այնպես էլ Եվրամիությանն անդամակցելու համար Թուրքիային Հայոց ցեղասպանությունը որպես նախապայման առաջադրելու դրույթի վերացմանն առնչվող խնդիրներին: Հոկտեմբերի 24-ին ԱՄՆ Սենատը քվեարկեց Ադրբեջանի ամերիկյան կառավարական օգնությունը սահմանափակող 907 հոդվածը մեկ տարով կասեցնելու օգտին: Թեեւ հոդվածը դրանով չվերացվեց, սակայն կորցրեց ուժը: Հոկտեմբերի 25-ին Ստրասբուրգում Եվրախորհրդարանը որոշեց, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը ԵՄ-ին անդամակցության նախապայման չէ Թուրքիայի համար: Այսպիսով, վերջինս ձերբազատվեց ճանաչման պարտադրանքից:

Թվում էր, թե 907 հոդվածի առնչությամբ Սենատի, իսկ Հայոց ցեղասպանության հարցում Եվրախորհրդարանի որոշումները կնպաստեն կրքերի հանդարտեցմանն, ու վերոհիշյալ հոդվածը եւ հարցն ասիճանաբար կդադարեն դառնալ Հայաստանի եւ սփյուռքի քննարկման առարկան: Ինչպես երեւում է, խնդիրը սոսկ Հայաստանն ու սփյուռքը չէ, այլ ադրբեջանական իշխանությունների ռազմատենչ հայտարարությունների, հայերին ահաբեկչության մեջ մեղադրելու նրանց նկրտումների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ այսպես կոչված հակաահաբեկչական գործողությունների դիմելու վերջիններիս ջղաձգումների թուրքական արձագանքների ու այդ արձագանքների ամերիկյան ընկալման մեկնաբանությունները:

«Ազգը» ժամանակին արձագանքելով ահաբեկչության հետ Հայաստանի մտացածին առնչությունների մասին ադրբեջանական մեղադրանքներին, դրանք որակեց հերյուրանք եւ փորձեց ցույց տալ հերյուրանքներով քաղաքականություն վարելու սնանկությունը: 907 հոդվածի առնչությամբ նշվեց, որ դա մշտապես շրջանցվել է, ինչի հետեւանքով Հայաստանին տրամադրվող ամերիկյան մարդասիրական օգնությունը տարեցտարի կրճատվել է, փոխարենն՝ Ադրբեջանինը շարունակ աճել: Այլ կերպ՝ խորհրդանշական բնույթի այս հոդվածն ընդամենը ամերիկացիների ձեռքին իրենց «հայամետությունը» հիմնավորելու գործիք է եղել: Ինչ վերաբերում է ցեղասպանության հարցին, ապա դրա՝ որպես ԵՄ-ին անդամակցության նախապայման մերժումը պայմանավորվեց Եվրախորհրդարանի վրա գործադրվող ԱՄՆ-ի ճնշումներով, որոնց հիմքում էին դրվել Թուրքիային անմիջականորեն աֆղանական պատերազմի մեջ ներքաշելու ամերիկյան հաշվարկները:

Ըստ երեւույթին ամերիկացիների քաղաքական հաշվարկներն անհիմն չէին: Ահա թե ինչու նոյեմբերի 1-ին Անկարայում, Ազգային անվտանգության խորհրդի նիստի ավարտին գումարվեց նաեւ զորահրամանատարության հետ թուրքական կառավարության արտակարգ նիստը: Դրան հետեւեց վարչապետ Բյուլենթ Էջեւիթի նույն օրվա հանդիպումը նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի հետ, որի ավարտին նա հայտարարեց Աֆղանստան 90 հոգուց բաղկացած հատուկ ստորաբաժանում գործուղելու կառավարական որոշման մասին: Կասկածից վեր է, որ Սեզերը հավանություն է տվել որոշմանը: Ամենայն հավանականությամբ, միմիայն հատուկ պատրաստվածության տպաներից կազմված այդ ստորաբաժանումն Աֆղանստան է շարժվելու նոյեմբերի 9-ին:

Թուրքական թերթերը նոյեմբերի 2-ի համարում իսկույն արձագանքեցին որոշմանը: Դրանցից ոմանք առանցքային առաջադրանք էին նախատեսում թուրքական ստորաբաժանմանը, ոմանք էլ ընդգծում, որ Թուրքիան ուղղակիորեն ընդգրկվելով ռազմական գործողություններում, դառնում է ԱՄՆ-ի ամենավստահելի դաշնակիցը: Այդ պմենի առումով թերեւս հատկանշականը «Գյոզջուն» էր: Թուրքական այս թերթը նույն օրվա համարում «Զինվորները գնում են, դոլարները՝ գալիս» խորագրով նշեց, որ ԱՄՆ-ը ներում է սպառազինման նպատակով Թուրքիային տրամադրված պարտքի 7 միլիարդը, իսկ Միջազգային արժութային հիմնադրամը սառեցնում է երկրի արտաքին պարտքից բխող ամենամյա վճարումների 5 միլիարդանոց մասնաբաժինը եւ 6 միլիարդ դոլարի հավելյալ վարկ է տրամադրում:

Այդ նույն օրը թուրքական պետհեռուստատեսության էկրանին պաշտոնաթող գեներալ Սուաթ Իլհանը, մեկնաբանելով Աֆղանստան թուրքական ստորաբաժանում գործուղելու կառավարական որոշումը, մեկնաբանեց նաեւ արտաքին պարտքի ներման, դրանից բխող ամենամյա վճարումների սառեցման եւ Թուրքիային հավելյալ վարկի տրամադրման մասին «Գյոզջուի» հոդվածը: Նա մասնավորապես ասաց, որ պատահական չեն օրերս թուրքական տնտեսության ճգնաժամի մասին ԱՄՆ-ում տարբեր մեկնաբանություններով հոդվածների լույս ընծայումը, հայերի հակաթուրքական գործողությունների կասեցումը, 907 հոդվածի վերանայումը, ԵՄ-ին անդամակցության համար ցեղասպանության ճանաչումը որպես նախապայման Թուրքիային առաջադրելուց հրաժարումը եւ Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման շուրջ ինքնակումների աննախադեպ աշխուժացումը:

Պաշտոնաթող գեներալն այս խոսքերով ոչ միայն հաստատեց «Գյոզջու» թերթին, այլեւ հիմնավորեց 907 հոդվածի, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության առնչությամբ նախօրոք արտահայտած մեր տեսակետը: Այն տարբերությամբ, որ եթե «Ազգը» ցեղասպանության ճանաչման նախապայմանի վերացումը վերագրում էր եվրոպական երկրների հետ ԱՄՆ-ի սակարկություններին, ապա Սուաթ Իլհանը դա պայմանավորեց թուրք-ամերիկյան սակարկություններով: Նրա խոսքերից ակնհայտ դարձավ, որ Թուրքիայի եւ ԱՄՆ-ի միջեւ սակարկվել է նաեւ 907 հոդվածը: Թե դրա վերացումը ի՞նչ նպաստպկ է հետաքրքրում, առանձին խնդիր է, հետեւաբար՝ մասնավոր մոտեցում է պահանջում:

ՀԱՍՈՒՆ ՅԱՔՈԲՅԱՆ

ԱՄՆ-ի եւ իսլամիստների վտանգավոր կապերը

Մթին եւ suրորինակ բարեկամություն

«Սառը պատերազմի» տարիներին, երբ աշխարհը բաժանված էր երկու հակամարս ճամբարների, ԱՄՆ-ը շարունակ փորձում էր դաշնակցել մահմեդական ժողովուրդների հետ եւ նրանց օգտագործել ընդդեմ ԽՍՀՄ-ի եւ կոմունիզմի: Ամերիկացիներին այնքան էլ չէր հետաքրքրում, որ մահմեդականներից շատերն իսլամը տիեզերական օրենք էին համարում: ԱՄՆ-ն առանձնակի կարեւորություն էր տալիս Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներին, դրանք համարելով կենսական շահերի գոտի:

Մերձավոր եւ Միջին Արեւելքում ամերիկացիների ռազմավարական 3 գերակայություններն էին Իսրայելի պաշտպանությունը, վառելիքի մատակարարումները եւ հակակոմունիստական պատվարի ստեղծումը (վերջինիս անհրաժեշտությունն այսօր վերացել է): 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունը եւ Աֆղանստանի խորհրդային օկուպացումը սարսափեցրին Արեւմուտքին: ԽՍՀՄ-ը մոտեցել էր Պարսից ծոցի նավթահանքերին, որոնց կենսական կարեւորությունն ընդգծում էր ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Քարտերը:

Չհամարձակվելով ուղղակի առճակատման մեջ մտնել ԽՍՀՄ-ի հետ, ԱՄՆ-ը որոշեց օգտվել մոջահեդների ծառայություններից: ԿՀՎ-ի կազմակերպած հավաքագրման ցանցին օժանդակում էին եվրոպական, պակիստանյան, սաուդյան, եգիպտական եւ նույնիսկ չինական գաղտնի ծառայությունները: Երեք տասնյակ երկրների 30 հազար իսլամիստ մարտիկներ մոտ տասը տարի մարզվում էին եւ մասնակցում հակախորհրդային արշավանքին, որն արտաքսական հոգեւոր առաջնորդները սրբազան պատերազմ էին անվանում: 1985 թ. մարտին նախագահ Ռոնալդ Ռեյգանն ստորագրեց ազգային անվտանգության-թիվ 166 հրամանագիրը, որով թույլատրվում էր ընդլայնել մոջահեդներին տրվող գաղտնի ռազմական օգնությունը: Արդեն հաջորդ տարվանից ամերիկյան վարչակազմը նրանց մատակարարեց «Սթինգեր» հրթիռներ, որոնք [illegible]ստ արդյունավետ էին Մոսկվայի եւ Քաբուլի մարտական ուղղաթիռների դեմ: 1986-1989 թթ. Իսլամաբադում ԿՀՎ-ի լրտեսատեսը եղած Միլտոն Բիրդենի տվյալներով, ԱՄՆ-ի ռազմական օգնությունը կազմել է 3,5 մլրդ դոլար: Ինչ վերաբերում է բեն Լադենին, 1999 թ. օգոստոսին Բիրդենը «Նյու Յորք թայմսում» գրեց, որ նա «ոչ թե ռազմիկ էր, այլ գլխավորապես ֆինանսավորող»:

Ֆրանսիացի քաղաքագետ Օլիվիե Ռուան իր «Դեպի եվրոպական իսլամ» գրքում նշում է, որ Աֆղանստանում ԿՀՎ-ի ստեղծած արաբ մարտիկների ցանցը տարիների ընթացքում բաժանվեց ինքնուրույն եւ փոքր ընդհատակյա խմբերի: Ոմանք վերադարձան հայրենիք եւ այնտեղ հիմնեցին ծայրահեղական շարժումներ, որոնցից է ալժիրյան GIA-ն: Մոջահեդներից շատերը մնացին Աֆղանստանում եւ կազմեցին բեն Լադենին հավատարիմ արտաքսականների ցանցի միջուկը: Այդ մոլեռանդները նյութատեխնիկական ու ֆինանսական աջակցություն են ստանում Պարսից ծոցի երկրներից, Գերմանիայից, Շվեյցարիայից, Սկանդինավյան թերակղզուց, Սուդանից, Պակիստանից: Արտաքսական դավանակիցների հետ կողք-կողքի նրանք կռվում են ինչպես արաբական թուլացած վարչակարգերի (Եգիպտոս, Եմեն, Թունիս, Ալժիր), այնպես էլ քրիստոնյաների (Բալկաններ, Չեչնիա, Ֆիլիպիններ) եւ Իսրայելի դեմ:

1990-ական թթ. սկզբներից իսլամիստ արտաքսականների թիրախների մեջ հայտնվեց նաեւ ԱՄՆ-ը՝ անհաստատության, ժողովրդավարության եւ դրամատիրության խորհրդանիշը: Ռոնալդ Ռեյգանի վարչակազմը 1980-ական թթ. արտաքսականներին բաժանեց «լավերի» եւ «վատերի»: Առաջինները սուննի մահմեդականներն են (որոնց սրբավայրերն ԱՄՆ-ի դաշնակից Սաուդյան Արաբիայում են) եւ Աֆղանստանում կռված մոջահեդները: Երկրորդը շիա արտաքսականներն են՝ իրանցի մոլլաները եւ «Հզբոլլահը», որոնք հանդես են գալիս հակաամերիկյան եւ հակաիսրայելական կարգախոսներով:

Այս տարբերակումը կարծես թե արդարացավ Բեյրութում 1983 թ. ամերիկացի ծովային հետեւակայինների դեմ իրականացված ահաբեկչությունից հետո: Բայց Իրանի հարցում ամերիկացիները սխալվեցին. 1990-ական թթ. այդ երկիրն առավել չափավորական էր, քան «աֆղանական ցանցի» ներկայացուցիչները: Իսկ Իրանի պարագան ուղղակի զավեշտական է: ԱՄՆ-ի լուռ համաձայնությամբ 1980 թ. Իրանի դեմ պատերազմ սանձազերծած Իրանն այսօր ասելի է դարձել ամերիկացիների համար: Երբ 1990 թ. Սադդամ Հուսեյնը գրավեց Քուվեյթը, Արեւմուտքը լայնածավալ ռազմական գործողություն սկսեց իր նորահայտ թշնամու դեմ:

Իրանի պարտությունն ԱՄՆ-ի համար ունեցավ 3 հետեւանք: Առաջինն այն է, որ դա համարվեց Մերձավոր Արեւելքի ազգայնական աշխարհիկ վարչակարգերի մոտալուտ անկման նախանշան: Ենթադրվում էր, որ մի օր դրանց փոխարինելու են արտաքսականների կառավարություններ: Տասը տարի է անցել է, բայց ազգայնական եւ աշխարհիկ վարչակարգերը մնում են եւ խիստ կասկածամիտ են ԱՄՆ-ի հանդեպ:

Երկրորդ հետեւանքը Մերձավոր Արեւելքի հակամարտությանը վերջ դնելու երազանքի վերահայտնությունն էր: Իսրայելցիներն ու պաղեստինցիները կարծես թե պատրաստ էին հակամարտության դիվանագիտական կարգավորմանը: Բայց 1995 թ. Յիցխակ Ռաբինն սպանվեց, իսկ 1996 թ. վարչապետ ընտրված Բենիամին Նաթանյահուն ընդդիմացավ հաշտության համաձայնագրի կնքմանը: Այսպիսով, 1990-ական թթ. սկզբներին ամերիկացիների հռչակած «նոր աշխարհակարգը» խաղաղություն չհաստատեց: Արաբները դա չեն մոռանա:

Երրորդ հետեւանքն էլ այն է, որ Սաուդյան Արաբիայում ամերիկյան զորքերի շարունակվող ներկայությունը զայրացնում է սուննի արտաքսականներին: «Էքսպրես» հանդեսն արձանագրում է, որ ժամանակը գործում է ընդդեմ ամերիկացիների: Իրաքցիների դեմ գործադրված վայրագությունները եւ իսրայելցիների դաժանությունների նկատմամբ Արեւմուտքի ներողամտությունը հանգեցրին այն բանին, որ այսօր Մերձավոր եւ Միջին Արեւելքի ժողովուրդները համակրում են Սադդամ Հուսեյնին:

Բիլ Քլինթոնի օրոք 1993 թ. պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերի եւ ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպան Մադլեն Օլբրայթի մշակած դոկտրինայի համաձայն, չափավորական իսլամը չի հակասում ժողովրդավարությանը: Մինչդեռ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Սեմյուել Հանթինգտոնն իր հայտնի «Քաղաքակրթությունների բախումը» գրքում պնդում է Արեւմուտքի եւ իսլամի բախման անխուսափելիությունը: Խնդիրն այն է, որ Վաշինգտոնն իրականում արաբական աշխարհում բնավ չի պաշտպանում ժողովրդավարական շարժումները եւ այսօր էլ շարունակում է սեպ կապերը տարածաշրջանի միահեծան վարչակարգերի եւ ավատատիրական միապետությունների հետ:

Ավելին, շվեյցարացի լրագրող Ռիշար Լաբեւիերի «Ահաբեկչության դոլարներ: Միացյալ Նահանգները եւ իսլամիստները» գրքում բազմաթիվ փաստերի հիման վրա ապացուցվում է, որ «իսլամիզմի առավել արտաքսական ձեւը շատ բաներով ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների գործողությունների ծնունդ է»: Որոշակի քաղաքական նպատակներով իսլամիստներին ֆինանսավորում են ԿՀՎ-ն, Պենտագոնը, ԱՄՆ նախագահի նախկին խորհրդական Զբիգնեւ Բժեզինսկին (իբրեւ գաղափարախոս), «Ռենդ Կորփորեյշընը» եւ այլն:

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Մոլլա Օմարը մենամարտի է կանչում Բուշին եւ Բլերին

Աֆղանստանի Թալիբան շարժման առաջնորդ մոլլա Օմարն ասպետական մենամարտի է հրավիրում ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին եւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերին: Այդ մասին հայտարարեց թալիբների կառավարության արտգործնախարար Վաֆիլ Մութավաքիլն իրանական IRN գործակալության թղթակցի հարցերին պատասխանելիս: Առաջարկվում է մենամարտն անցկացնել Կալաշնիկովի ավտոմատներով:

«Ամերիկացիները պնդում են, թե մոլլա Օմարը փախչում եւ թաքնվում է: Ուստի Ջորջ Բուշին եւ Թոնի Բլերին առաջարկում եմ մեկական ավտոմատ վերցնել եւ ներկայանալ մենամարտի վայր, որտեղ նրանց կսպասի մոլլա Օմարը նույն զենքով: Եվ այդ ժամանակ կտեսնենք, թե ով կփախչի», հայտարարեց Մութավաքիլը: Բայց նա չասաց, թե այդ պահին որտեղ կլինի թիվ 1 ահաբեկիչ բեն Լադենը: Նկատի ունենալով ավտոմատի հանդեպ նրա ջերմ վերաբերմունքը, կարելի է ենթադրել, որ մենամարտի պահին կլինի մոտերքում ինչ-որ տեղ:

«Անվտանգության նկատառումները մոլլա Օմարին ստիպում են մշտապես փոխել կեցության վայրը: Բայց նա առաջվա պես արդյունավետ ղեկավարում է կառավարության աշխատանքը», ավելացրեց Մութավաքիլը: Նա կրկնեց ավելի վաղ արած այն հայտարարությունը, որ Աֆղանստանում ծերբակալվել են ամերիկացի զինվորներ եւ լրտեսներ: Թալիբների արտգործնախարարը բացառեց Աֆղանստանում ռազմական գործողությունների դադարեցման շուրջ ամերիկացիների հետ բանակցությունների հնարավորությունը, ընդգծելով, որ ԱՄՆ-ը հենց ինքը «փակեց բանակցությունների դուռը», երբ սկսեց խոսել վերջնագրերով:

Թալիբների տվյալներով, հոկտեմբերի 7-ից մինչեւ օրս ԱՄՆ-ի ռմբակոծումներից զոհվել է մոտ 5 հազար մարդ:

ԱՄՆ

Վան Գրիգորյանն առաջարկում է «պատին» նայել միասնաբար

Որպես թուրք-հայկական հաշտեցման հանձնախմբի անդամ Ամերիկայի հայկական համագումարի տնօրենների վարչության նախագահ Վան Գրիգորյանը նոյեմբերի 2-ին հրավիրվել է խոսելու Ամերիկա-թուրքական ասոցիացիաների ասամբլեայի (ԱԹԱԱ) 22-րդ տարեկան համագումարի ընթացքում:

ԱԹԱԱ-ն բաղկացած է 55 ամերիկա-թուրքական կազմակերպություններից եւ անհատ քաղաքացիներից՝ Ամերիկայից, Կանադայից եւ Թուրքիայից: Համագումարը տեղի է ունեցել Վաշինգտոնի «Վաշինգտոն» հյուրանոցում:

Անդրադառնալով հայտնի բանաստեղծ Ռոբերտ Ֆրոստի «պատերի» գոյության անհանդուրժողականությանը նվիրված բանաստեղծությանը, Վան Գրիգորյանը նշել է, որ հսկայական պատ գոյություն ունի հայերի եւ թուրքերի միջեւ, եւ որ այդ պատի յուրաքանչյուր կողմում կանգնածը չգիտի, թե ինչ է կատարվում մյուս կողմում: «Մենք երբեք այդ պատին միասնաբար չենք նստել», ասել է նա, համարելով, որ հուլիսին Ժնեւում ԹՀՀՀ-ի գոյառումն այդ առումով խիստ նպատակահարմար էր: Նա շեշտել է, որ հանձնախումբը կառավարական հարաբերությունների փոխարեն գործելու հավակնությունը չունի եւ ոչ էլ ասյան է պատմական վճիռ արձանագրելու՝ տեղի՞ է ունեցել ցեղասպանությունը, թե՞ ոչ:

Հանձնախումբը, ըստ նրա, զբաղվում է հայ-թուրքական հարաբերություններում վերացնելու ամոթի ծածկույթը, օրինակ ծառայելով ուրիշներին, որ նույնպես երկխոսություն ծավալեն երկու հասարակությունների տարբեր խավերի ներկայացուցիչների միջեւ:

«Չափազանց դժվար եւ ցավոտ բաներ ենք ունենալու, բայց դրանից ոչ մեկը չի կարող համեմատվել իրենց ծննդավայրում հայերի կոտորածի հետ: 1914 թ.-ին 2.538 հայկական եկեղեցիներ եւ 451 վանքեր կային այդ հողի վրա: Չեմ կարող հավատալ, որ դրանց եւ ֆիզիկական անձանց ոչնչացումը կարող է որեւէ մեկին հպարտություն պատճառել կամ դրդել, որ արդարացնի կատարված ողբերգությունը: Եթե պատճառում է, կամ դրդում արդարացնելու, ապա առավել մեծանում է հանձնաժողովի կարեւորությունը: Մենք փորձում ենք դասեր քաղել աշխարհում գործող հաշտեցման այլ հանձնախմբերից: Ոմանք հաջողության հասել են, ուրիշները՝ ոչ: Եթե մենք կարողանանք փոխադարձ ըմբռնումով մի նոր գլուխ սկսել մեր հարաբերություններում, ապա արդարացված կլինեն հաշտեցման հանձնաժողովի գոյատևման նպատակները», եզրափակել է իր խոսքը Վան Գրիգորյանը:

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Հայոց ցեղասպանությունն էր պատճառը

Ըստ ֆրանսահայ համայնքի «Յառաջ» օրաթերթում տպագրված ժնեւից Արման Գասպարի հաղորդման՝ «Ֆեդերալիզմ է լիբերտե» կուսակցության անդամ Ստեֆան Մալփանգոսին (խորհրդարանական երկրի միակ իսլամխոս Թեսենի գավառից) հոկտեմբերի սկզբներին հրաժարական է տվել, որովհետեւ Հայոց ցեղասպանության ճանաչումը պահանջող իր ներկայացրած բանաձեւը տեւականորեն հետաձգվել է: Երեսուներեքամյա խորհրդարանականը հրաժարական իր նամակում դատապարտել է մյուս խորհրդարանականների անտարբերությունը 20-րդ դարում մարդկության դեմ գործված վատթարագույն ոճիրներից մեկի նկատմամբ:

Ցարդ միայն ժնեւի խորհրդարանն է, որ 1998-ի հուլիսի 25-ին բանաձեւ է ընդունել ճանաչելու Հայոց ցեղասպանությունը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Ճենտրեճյան դուետ

Երաժիշտներ կան Աստծո շնորհով օժտված, որոնք ինչ էլ լինի, ինչպիսի խոչընդոտող ու անբարենպաստ պայմաններ էլ ուղեկցեն մշակութային կյանքին՝ հավատարիմ են իրենց կոչմանը: Ուսերին բեռնած մարդկանց կյանքը գեթ մի քանի պահ առնին ոգեզուրկ աղբից մաքրելու առաքելությունը, ձեռներին բռնած իրենց կյանքի անդավաճան ուղեկից նվագարանները, գնում են նրանք ժամանակի միջով, անցնում են մեր հոգիի փողոցներով, մեր կողով... Անշտաղ, համեստորեն, արհիսի ներքին արժանապատվության զգացողությամբ... Ու չեն խառնվում ժամանակի պոչեր եւ պատեհապաշտ հորձանուտին:

Արմեն եւ Աշոտ Ճենտրեճյան եղբայրներ: Չեռքը ձեռքի, ուսը ուսի անցել են նրանք իրենց կյանքի ճանապարհը. Չուխաջյանի, Չայկովսկու անվան երաժշտական դպրոցներ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: եվ այսօր Ճենտրեճյան ջութակահարները որպես դուետ հայ կատարողական արվեստի անդաստանի անսամբլային ժանրի գրեթե միակ ներկայացուցիչներն են, որոնք տասնյակ տարիներ ուղեկցում են մեր երաժշտական-մշակութային կյանքին:

Հայտնի է, որ մի շարք առանձնահատկությունների շնորհիվ անսամբլային արվեստը կատարողական ամենաբարդ սեռին է պատկանում: եվ բնավ ամեն կատարող չէ, որի երաժշտական օժտվածությունը հնարավորություն է ընձեռում փորձել իր ուժերն անսամբլային ոլորտում: Այս առումով Ճենտրեճյան եղբայրները մեզանում բացառիկ երեւույթ են:

Շուրջ 200 ստեղծագործություններ ամփոփող իրենց նվագացանկով, որն ընդգրկում է արեւմտաեվրոպական միջնադարի, դասական եւ արդի կոմպոզիտորների երկեր, աշխարհի տարբեր երկրներում ունեցած համերգներով (ԽՍՀՄ, Ֆրանսիա, Չեխոսլովակիա, Լիբանան եւ այլուր), հատուկ իրենց համար գրված հայ եւ այլազգի կոմպոզիտորների ստեղծագործությունների մեկնաբանմամբ, իրենց կատարողական փորձը որպես Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասախոսներ երիտասարդ սերնդին փոխանցելու պատասխանատվությամբ ճենտրեճյան եղբայրները հաստատել եւ հաստատում են այն ճշմարտությունը, որ անսամբլային արվեստը, տվյալ պարագայում՝ գործիքային զուգանվագը հանդիսանում է երաժշտական խիստ ինքնատիպ մտածողության, յուրօրինակ պոլիֆոնիկ ու արիստոկրատիկ մտածողության արդյունք:

... Վերջին տասը տարիներին, որոնց որակավորումներից մեկը «անցումային» ժամանակաշրջան է, մեր երաժշտական մշակույթը (եւ ոչ միայն երաժշտական) ապրում է այլազան ցնցումներով լի շրջան, որում սուղորեն մասնաստվել նշարների երկու կողմերում են հայտնվել զտարյուն արվեստն ու նրա ջատագովները եւ եսակենտրոն ամբիցիաների արգասիք պսեւդոմշակույթը, որի մունետիկները նրանք են, ում մասին ժամանակին ասել է Կ. Ստանիսլավսկին. «Սիրում են ոչ թե արվեստը, այլ իրենց՝ արվեստում»: Սույն դիտարկման կտրվածքով Ճենտրեճյան դուետն իր կատարողական եւ մարդկային անհատականության նկարագրով հնարավորինս լրացնում է մեր երաժշտական մշակույթի անդաստանի մաքուր բրվածինը:

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կայացած Ճենտրեճյան դուետի համերգը եւս մեկ անգամ հաստատեց այս մտազնումը: Երաժշտությունը, որ արվեստներից, անտարակուսելիորեն, ամենաառեղծվածայինն է եւ ոգեղենը, գրեթե անհնարին է «պատմել» բառերով: Նույնպես եւ՝ նկարագրել նրա կատարումը: եվ այդուհանդերձ, փորձենք ներկայացնել ընթերցողին այն, ինչին ականջալուր եղանք հիշյալ համերգին: կորելլի, սոնատ d-moll: Այն աչքի ընկավ նուրբ ֆիլիրովկայով, ծայնատարության ճկունությամբ, ներքին զուսպ դրամատիզմով: Լոկատելլիի G-dur սոնատը խորապես ապրված, ճարտարական-հայեցողական երկխոսություն էր: Նաեւ՝ յուրահանչյուր ջութակի ինքնատիպ մտորումների մենախոսություն, որ պարզեցին մեր առջեւ եղբայր երաժիշտները: Հենդելի e-moll սոնատը հնչեց որպես խորհրդ ու ամփոփ երաժշտական կառույց՝ ձեւի անվրեպ զգացողությամբ, հիանալի նրբին pianissimo-ներով եւ պարբերությունների հնչյունային ճշգրիտ գագաթնակետերով: Երեք այս ստեղծագործությունները պատկերավոր ներկայացրին իրենց ժամանակի ազնվաբարո երաժշտության գեղագիտությունը: Համերգի II բաժնի սկիզբը նշանավորվեց Նարեկացու «Վարդավառի տաղ»-ով՝ Կարո Չալիկյանի անգուգական մշակմամբ: Ճենտրեճյան դուետի կատարմամբ ընդբոխնեցինք ազգային ոգեղենության անբասիր պահեր: Թե՛ ինքը տաղը, թե՛ վարպետորեն արված մշակումը, թե՛ կատարումը պարզեցին հայ մշակույթում դարեր ի վեր արմատացած ազգային ֆենոմեններից մեկը՝ խոհահայեցողական թախիծ անգամ ամենազվարթ պահերում, եւ հոգու լույսով օծված, հոռետեսության եզրեր չփնտրող ողբերգականություն: Հայդնի Մենուետը, Պագանինիի Սերենադն ու Սոնատինը հստակ դեր խաղացին համերգային ծրագրի ներքին դրամատուրգիկ զարգացման համար: Անսամբլային անվրեպ զգացողություն, խոր երաժշտականություն կանտիլենային դրվագներում եւ թեթեւատահ արագընթացություն սլացիկ պասաժներում՝ այսպես կարելի է բնորոշել վերոնշյալ երկերի կատարումները: Իսկ Վենյավսկու Կադրիսը համերգի հենց այն բարձրակետն էր, որին հասնելուն պես, ինչպես լեռան գագաթից, մեզ պարզվեցին մեկը մյուսից հոյակերտ երաժշտական գոհարիկ կալվածքներ. Ճենտրեճյանների մշակմամբ հնչած Վենյավսկու, Շուբերտի, Դվորժակի, Բրամսի, Ուայթի հանրաճանաչ մանրանվագները: Փայլուն վիրտուոզությամբ ներկայացված այս ստեղծագործությունների բույլը, ասես «ճեղքվեց» Դվորժակի եւ Բրամսի պարերի մեջտեղում կատարած Վաժա Ազարաշվիլիի Նոկտյուրնով: եվ պարզվեց, որ Ճենտրեճյան դուետին հատուկ են ոչ միայն կատարման վիրտուոզ փայլը, մեկնաբանությունների ընդգրկուն շերտերը, հնչերանգային գեղեցկությունը, այլեւ՝ նուրբ բանաստեղծականությունը: Գեղահնչյուն այս գիշերերգը նրանց կատարմամբ, ասես, բարձր պոեզիայով համակված սիրո խոստովանություն լիներ: Որպես «բիս» համերգի ավարտին հնչեց հայկական ժողովրդական «Սիրուհիս» երգը՝ Աշոտ Ճենտրեճյանի փոխադրությամբ: Ճենտրեճյան դուետի հետ հանդես եկավ դաշնակահարուհի, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դոցենտ Լոլիտա Բաբաջանյանը: Իր նվագակցությամբ, որը տեղ-տեղ նրբին ու ճարտարական էր (որպես երաժշտական հենք) եւ տեղ-տեղ պատկերային-դրամատիկ (որպես երկխոսող նվագարան) դաշնակահարուհին նոպաստեց ջութակահարների գեղարվեստական բոլոր մտահղացումների իրականացմանը:

Ավելացնենք վերջում, որ այս հոգեհաճո երաժշտական միջոցառման հովանավորն էր «Երեւանը եւ երեւանցիները» բարեգործական հիմնադրամը:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

Կին գործիչներին աջակցելու մտահոգությամբ

Բարձրարժեք ազգային մշակույթ ունեցող, կրող եւ զարգացնող կին գործիչը պետական ուշադրության եւ հովանավորության դեպքում անառարկելիորեն կարող է մեծ գործեր կատարել: Մշակույթի կին գործիչներին տատարող, նրանց հիմնահարցերով զբաղվող հասարակական, ստեղծագործական կազմակերպությունները միայնակ, իրենց սուղ միջոցներով, բնականաբար, մեծ առաջընթացներ չեն գրանցում կանանց օգտին: Անհրաժեշտ է ավելին պետական եւ հասարակական կառուցվածքների միասնական գործելակերպ, հետեւողական, արդյունավետ գործունեություն, նաեւ մշակույթը զարգացման ճիշտ ուղու վրա դնելու ստացավություն: Ուստի, երեկ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի սրահում հավաքված կանանց կազմակերպությունների ներկայացուցիչները՝ կին արվեստագետների, հանրապետության ճանաչված կին գործիչների մասնակցությամբ աշխույժ, հետաքրքիր քննարկում ծավալեցին «Կինը եւ մշակույթը» թեմայով, որը ծրագրված աշխատանքների առաջին քայլն է: Ինչպես հավաստիացրին կազմակերպիչները, այդ թեմայով պարբերաբար տեղի են ունենալու նաեւ գիտաժողովներ, միջոցառումներ: Ակնկալվում են նաեւ փառատոներ «Մշակույթի լավագույն կին գործիչը» նշանաբանով:

ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Ալիս Ադամյանը, ՀՀ վարչապետին առընթեր կանանց կոմիտեի աշխատանքը համակարգող Կարինե Կիրակոսյանը, ՀՀ դիզայներների միության նախագահ Ժ. Բաղդասարյանը, գրող, հրապարակախոս, ՀՀ մշակույթի ֆոնդի նախագահ Արեւշատ Ավագյանը, Կանանց հանրապետական խորհրդի նախագահ Նորա Հակոբյանը, մյուս բանախոսներն անդրադարձան ազգային մշակույթի պահպանման ու զարգացման, այս ասպարեզում կնոջ դերի բարձրացման, աճող սերնդին ազգային գաղափարախոսությամբ, մշակույթով կրթելու, կին արվեստագետների հեղինակային իրավունքների պաշտպանության եւ բազմաթիվ այլ հարցերի շուրջ:

Մշակութային տարբեր կազմակերպությունների, մասնավորապես Թեմեյան մշակութային միության, Մշակութային խորհրդարանի անդամների եւ այլոց ելույթներում հնչեցին նաեւ հետաքրքիր առաջարկություններ: Հուսանք, որ ջանքերի, նախաձեռնողության, մտահոգության ու ցանկության այս յուրատեսակ համատեղումը գոնե կսատարի կին մշակութային գործչին եւ էականորեն կնպաստի նրա դերի բարձրացմանը ինչպես մշակույթի զարգացման գործում, այնպես էլ պետական, կառավարման ու հասարակական կյանքում:

ԱՐԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՓԱՐԻԶՈՒՄ

«Մարդկության սեւ գիրքը»

Փարիզի «Պրիվա» հրատարակչությունում լույս տեսավ «Մարդկության սեւ գիրքը» անունը կրող ծավալուն աշխատությունը: 720 էջանոց հատորը ենթավերնագրված է «Ցեղասպանությունների համաշխարհային պատմություն»: Հեղինակների խմբի ղեկավարը Երուսաղեմի Ողջակիզման ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Իսրայել Չառնին է:

Աշխատությունն ընդգրկում է աշխարհում տեղի ունեցած զանգվածային կոտորածների պատմությունը: Հայերին վերաբերող նյութերը գրել են նշանավոր պատմաբաններ Վահագն Տատրյանը եւ Իվ Թեռնոնը: Գրքի «հայկական մասի» խմբագիրը Վաշինգտոնի Հայկական ազգային ինստիտուտի տնօրեն Ռուբեն Փ. Ադալյանն է:

Երկմասանի գրքի առաջին մասը փոքր է՝ ընդամենը 80 էջանոց: Այստեղ ներկայացված են զանգվածային ջարդերի հետ կապված տերմինաբանությունը եւ ընկալումները: Աշխատության մեջ գլխավորը երկրորդ մասն է, որը կազմված է այբբենական կարգով իրար հաջորդող հոդվածներից: Ըստ էության, գործ ունենք ոչ թե իսկական հանրագիտարանի, այլ հանրագիտարանային բառարանի հետ: «Ֆրանս-Արմենի» հանդեսը գրում է, որ աշխատության մեջ Հայոց ցեղասպանությունը համեմատաբար լավ է ներկայացված, քանի որ շուրջ 170 հոդվածներից դրան նվիրված է 15-ը, իսկ հրեաների Ողջակիզմանը 33-ը:

Աշխատության դրական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվում հրաժարվելու հրեաների Ողջակիզման «բացառիկության» պնդումից: Իսրայել Չառնիի գրած ներածության մեջ նույնիսկ նշվում է, որ «շեշտը դրված է Ողջակիզման եւ Հայոց ցեղասպանության վրա»: Պրոֆեսոր Չառնին ընդգծում է, որ «վերջին տարիներին Հայոց ցեղասպանությունը դարձել է զգալի թվով հետազոտությունների առարկա, ինչի շնորհիվ գիտական առումով երկրորդ տեղում է Ողջակիզումից հետո»:

Բնավ չնսեմացնելով նոր լույս տեսած հանրագիտարանային բառարանի կարեւորությունը, այնուամենայնիվ կարելի է վիճելի համարել ցեղասպանություններն ըստ տեղերի դասակարգելու սկզբունքը:

Ցեղասպանությունը ժողովուրդների համար մեծագույն ողբերգություն է, մարդկության դեմ ուղղված ոճիր: Հայոց ցեղասպանությունը որոշ իմաստով Ողջակիզումից էլ ավելի կործանարար էր, քանի որ իրականացվեց ոչ թե օտար երկրներում, այլ հայերի բնօրրանում, բնաջնջեց գրեթե 2 մլն մարդու, մնացյալներին փախուստի մատնեց, անվերադարձ կործանեց 3200-ից ավելի մշակութային հուշարձաններ (եկեղեցիներ, վանքեր, կալվածքներ, դպրոցներ եւ այլն), չխոսելով արդեն միլիոնավոր հայերի անլուր տառապանքների եւ նյութական կորուստների մասին:

Դ. Ք.

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի գահակալության տարեդարձին

Սանիսլավսկու անվան թատրոնի դահլիճում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի գահակալության երկրորդ տարելիցին: Միջոցառմանը ներկա էին Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Առաջինը, նրան ուղեկցող հոգեւոր հայրեր: Համերգը կայացավ Արաբկիրի, Նորքի եւ Մալաթիայի հայորդաց տների շնորհալի երեխաների ուժերով: Հնչեցին ինչպես ժողովրդական, այպես էլ ժամանակակից մեղեդիներ, որոնցում զգացվում էր հայ հոգեւոր երաժշտության շունչը: Համերգի ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսը եւ Բարդուղիմեոս Առաջին Տիեզերական պատրիարքը շնորհակալություն հայտնեցին համերգի կազմակերպիչներին: Վերջինս ասաց, որ հայոց սուրբ հողի վրա քրիստոնեության շունչն է թեւածում: Այնուհետեւ Տիեզերական պատրիարքը փոքրիկ խաչեր նվիրեց համերգի բոլոր մասնակիցներին, իսկ Ամենայն հայոց կաթողիկոսին՝ ոսկեձույլ խաչ:

ՆԱՐԲՈՒՀԻ ՂԱՐԲԻՆՅԱՆ

Փոքրիկ արվեստագետների առաջին քայլերը

Արդեն երկրորդ տարին երեխ հայորդաց տները (Արաբկիր, Նորք, Մալաթիա) նշում են Վեհափառի օծման երկրորդ տարեդարձը: Վերջերս նրանց ջանքերով երեւանի նկարչի տանը բացվեց ցուցահանդես, որտեղ ներկայացված էին 4-17 տարեկան երեխաների աշխատանքներ՝ նկարներ, գոբելեններ, ժանյակներ, խնդակներ, մաքրամե, հայկական ժամանակակից տարազով ձեւավորված տիկնիկներ:

Ներկայացված էին ե՛ւ դասական, ե՛ւ ավանգարդ, ե՛ւ աբստրակտ ոճի գործեր: Ցուցահանդեսի հովանավորն էր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը՝ հանձին տիկին Լուիզ-Սիմոն Մանուկյանի, ինչպես նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ կաթողիկոսը, որը կարողանում է ուշադիր լինել մատաղ սերնդի գեղագիտական ճաշակը զարգացնելու համար:

ԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ



Մարզական

ԹԱՆՐԱՄԱՐՏ

Յուրի Սարգսյանը հիացնում է մարզական երկարակեցությամբ

Գենադի Օլեշչուկը համաշխարհային ռեկորդ սահմանեց

Թուրքիայի Անթալիա քաղաքում ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնության երկրորդ օրը ևս նշանավորվեց համաշխարհային նոր ռեկորդով: 62 կգ քաշային ծանրորդների մրցավեճում բելառուսցի Գենադի Օլեշչուկը հրում վարժությունում 0,5 կգ-ով թարմացրեց չին ծանրորդ Մաոշենի աշխարհի նախկին ռեկորդը: Նա բարձրացրեց 181 կգ-անոց ծանրաձողը, որը բելառուսցի ծանրորդին աշխարհի չեմպիոնի կոչմանն արժանացրեց: Պոկում վարժությունում Օլեշչուկը ցույց էր տվել 137,5 կգ արդյունք, որն ընդամենը 3-րդ ցուցանիշն էր: Նույնպիսի արդյունք առաջին վարժությունում ցույց էր տվել բուլղարացի Նիկոլայ Փեշալովը, որն անձնական քաշով զիջում էր Օլեշչուկին: Իսկ լավագույն արդյունքը պոկում վարժությունում պատկանում էր չին ծանրորդ Լի Ինլունին (142,5 կգ), որը երկամարտի 305 կգ արդյունքով արժանացավ արծաթե մեդալի: Իսկ Օլեշչուկի չեմպիոնական արդյունքը հավասար էր 317,5 կգ-ի: Երկամարտում բրոնզե մեդալը բաժին հասավ բուլղարացի Ստեֆան Գեորգիևին՝ 302,5 կգ (135+167,5): Հրում վարժությունում Գեորգիևը գրավեց 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով նույն արդյունքն ունեցող, սակայն անձնական քաշով իրեն զիջող կուբացի Վլադիմիր Ռոդրիգեսին:

62 կգ քաշայինների մրցավեճին մասնակցեց նաեւ ծանրամարտի հայկական դպրոցի անվանի վետերան, մեծ սպորտում ելույթները շարունակող, օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների բազմակի մրցանակակիր ու ռեկորդակիր, սպորտի վաստակավոր վարպետ Յուրի Սարգսյանը, որը բավական ժամանակ է, ինչ բնակվում է Ավստրալիայում եւ մրցումներում հանդես է գալիս այդ երկրի դրոշի ներքո: Հաշվի առնելով Յուրի Սարգսյանի տարիքը, նրա ելույթը պետք է հաջող համարել: Յուրին երկամարտի 292,5 կգ (127,5+165) արդյունքով գրավեց 8-րդ տեղը: Պոկում վարժության նրա արդյունքը 10-րդն էր, իսկ հրում վարժությունում Յուրին գրավեց 5-րդ պատվավոր տեղը: Իրոք որ, հիանալի կարելի է Յուրի Սարգսյանի մարզական երկարակեցությամբ:



Երեկ ուշ երեկոյան աշխարհի առաջնության պարգեւները վիճարկեցին 69 կգ քաշային կարգում հանդես եկող ծանրամարտիկները: Մրցահարթակ դուրս եկան նաեւ Հայաստանի հավաքականի առաջին պատվիրակները՝ Ռուդիկ Պետրոսյանն ու Վարազդատ Վասիլյանը:

Կանանց մրցավեճում 53 կգ քաշային կարգում չեմպիոնի կոչման համար պայքարում վճռորոշ եղավ պոկում վարժությունը: Թայվանցի Լին Ինֆենը բարձրացրեց 95 կգ-անոց ծանրաձողը, որը 2,5 կգ-ով գերազանցում է 2-րդը ճանաչված չին մարզուհի Կի Խոնջայի արդյունքը, 5 կգ-ով էկվադորցի Ալեքսանդրա Էսկոբարի ցուցանիշը: Դա էլ վճռեց մեդալների հարցը, քանի որ հրում վարժությունում երեքն էլ հաղթահարեցին 115 կգ ծանրությունը:

Այսպիսով, երկամարտի 210 կգ արդյունքով ոսկե մեդալը նվաճեց Լին Ինֆենը: 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրներ դարձան Կի Խոնջան (207,5 կգ) եւ Ալեքսանդրա Էսկոբարը (205 կգ):

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

22-րդ տուրը թվերով եւ փաստերով

*22-րդ տուրում գրանցվեց ամենացածր արդյունավետությունը. 5 խաղում խփվեց ընդամենը 12 գնդակ: Առաջնության 108 խաղում խփվել է 378 գոլ, միջինը՝ 3,5 գնդակ մեկ խաղում:

*Դաշտի տերերը հաղթեցին 3 խաղում, հյուրերը՝ 2-ում: Խփված 12 գնդակները հավասարապես բաշխվեցին հյուրերի եւ դաշտի տերերի միջեւ: Գրանցված 378 գոլերից 208-ի հեղինակը դաշտի տերերն են: Նրանք առաջնության 52 խաղում հաղթել են, 39-ում հաջողությունն ուղեկցել է հյուրերին:

*«Փյունիկը» «Սպարտակի» նկատմամբ ՀՀ առաջնություններում 11-րդ անգամ հաղթանակի հասավ: Առայժմ «Սպարտակին» չի հաջողվում գեթ մեկ անգամ հաղթել «Փյունիկին»:

*Վերջին 5 հանդիպումներում չափազանց անհաջող է խաղում «Արարատը»՝ վաստակելով ընդամենը մեկ միավոր: Թիմը 3-րդ անընդմեջ պարտությունը կրեց, բոլորն էլ՝ «չոր» հաշվով: «Լեռնագործից» «Արարատը» ՀՀ առաջնություններում 2-րդ պարտությունը կրեց: Առաջին հաղթանակը կապանցիները տոնել էին 1992 թ. (4–1):

*2-րդ շրջանում վստահ է հանդես գալիս «Զվարթնոցը»՝ 9 հանդիպումներում տոնելով 8 հաղթանակ, զիջելով միայն «Շիրակին»: Առաջնության 2-րդ կեսում վաստակած միավորների քանակով «Զվարթնոցի» արդյունքը (24 միավոր) առայժմ լավագույնն է: Երկրորդ ցուցանիշն ունի «Փյունիկը»՝ 8 խաղից 22 միավոր:

*«Դինամոն» արդեն 11 խաղ չի կարողանում հաղթել (3 ոչ-ոքի, 8 պարտություն):

*«Կոտայքն» առաջնությունում անդրանիկ հաղթանակը տոնեց: Աբովյանցիները «Դինամոյի» նկատմամբ ռեւանշի հասան առաջին շրջանում կրած պարտության դիմաց:

*«Բանանցի» դարպասը Արման Բաբայանի խփած գնդակը «Դարաբաղի» 200-րդ գոլն էր ՀՀ առաջնություններում:

*Գրանցվեց խոշոր հաշվով մեկ հաղթանակ: «Բանանցը» նման կարգի իր 4-րդ հաղթանակը տոնեց, իսկ «Դարաբաղի» համար դա խոշոր հաշվով 8-րդ պարտությունն էր: Առաջնությունում առավել հաճախ՝ 10 անգամ խոշոր հաշվով պարտվել է «Լոռին»:

*«Փյունիկը» 8-րդ անգամ 11 մետրանոցի իրավունք ստացավ, եւ բոլոր հարվածներն էլ անվրեպ իրացրած Վարդան Մինասյանն այս անգամ էլ դիպուկ գտնվեց:

*Մալալը «Փյունիկում» իր 3-րդ գնդակը խփեց, որը ՀՀ առաջնություններում նրա 11-րդ գոլն էր: Սա Հայաստանում հանդես եկած լեգեոներների շրջանում լավագույն արդյունքն է: Իսկ «Փյունիկի» լեգեոներներից այս մրցաշրջանում ամենաարդյունավետն առայժմ Դիավարան է (5 գոլ):

ԽՃԱՆԿԱՐ

Ուշադրության արժանանալու յուրօրինակ դրսեւորում

Անգլիայի պրեմիեր-լիգայում եւ մյուս դիվիզիոններում յուրաքանչյուր ֆուտբոլային ակումբին կից գործում է ֆուտբոլի կանանց թիմ: Եվ թեեւ Անգլիայում ֆուտբոլը պաշտում են, սակայն կանանց ֆուտբոլի նկատմամբ ֆուտբոլասերները բավական սառը վերաբերմունք են դրսեւորում: Եվ ահա, որպեսզի ուշադրության արժանանան, «Բրիստոլ Ռովերս» թիմի անդամները դիմեցին յուրօրինակ քայլի: Նրանք որոշեցին հրաժարակել 2002 թ. օրացույց, այնտեղ տեղադրելով իրենց էրոտիկ նկարները: Օրացույցի արժեքը 6 ֆունտ է: Վաճառքից ստացված ողջ գումարը կմտնի թիմի բյուջե, մի մասն էլ կօգտագործվի բարեգործական նպատակով: Թիմի անդամները համոզված են, որ օրացույցը հիանալի գովազդ կհանդիսանա «Բրիստոլ Ռովերսի» համար՝ ստիպելով ֆուտբոլասերներին հաճախել թիմի մասնակցությամբ հանդիպումներին:

Թիմի ավագ Մարսիա Դինը նշել է, որ տղամարդիկ սխալ կարծիք ունեն ֆուտբոլիստուհիների մասին: Նրանց պատկերացումներով ֆուտբոլիստուհիները մկանոտ են, զուրկ կանացիությունից, որոնք դաշտում վազվզում են գնդակի հետեւից: Իսկ օրացույցին ծանոթանալուց հետո, անկասկած, այդ կարծիքը կփոխվի:

«Բրիստոլ Ռովերս» ակումբի ղեկավարությունը որոշել է, որ եթե իրենց ձեռնարկած քայլը հաջողությամբ պսակվի, ապա հաջորդ տարի նման մի օրացույց էլ կհրապարակվի տղամարդկանց թիմի անդամների էրոտիկ նկարներով:

ՇԱԽՄԱՏ

Վլադիմիր Հակոբյանի գերազանց ելույթը

Գերմանական Բադ-Վիսսե քաղաքում ավարտվեց շախմատի ներկայացուցչական խոշոր մրցաշարը, որի մասնակիցների թվում էր նաեւ երեւանցի միջազգային գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը: Ավարտական տուրից առաջ մրցաշարում հետաքրքիր իրավիճակ էր ստեղծվել: Վլադիմիր Հակոբյանը Բակլանի, Կրասենկովի եւ Շաբալովի հետ 7-ական միավորով բաժանում էր 1–4-րդ տեղերը: Մի խումբ շախմատիստներ էլ վաստակել էին 6,5-ական միավոր: Ավարտական տուրում առաջատարները հանդիպում էին միմյանց հետ: Երկու պարտիաներում էլ գրանցվեց ոչ-ոքի արդյունք: Խաղաղ դաշն կնքեցին Հակոբյանն ու Բակլանը, Շաբալովն ու Կրասենկովը: Արդյունքում բոլոր չորս շախմատիստներն էլ վաստակեցին 7,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցները հաշվի առնելով, մրցաշարի հաղթող ճանաչվեց Վլադիմիր Հակոբյանը: 2–3-րդ տեղերը բաժանեցին Բակլանն ու Շաբալովը, 4-րդ տեղում Կրասենկովն է:

6,5 միավոր ունեցող բոլոր շախմատիստներն էլ միմյանց միջեւ կայացած պարտիաներում խաղաղ դաշն կնքեցին: Գործակիցներով լավագույն հնգյակը եզրափակեց ուկրաինացի

Անդրեյ Վոլոկիտինը (7 միավոր):

Վլադիմիր Հակոբյանն ընթացիկ մրցաշրջանում շարունակեց իր հաջող մրցելույթները: Նրա տոնած հաղթանակի արժեքը իրոք մեծ է, եթե նկատի ունենանք, որ մրցաշարի 512 մասնակիցներից 32-ը միջազգային գրոսմայստերներ էին, 85-ը՝ ՖԻԴԵ-ի միջազգային վարպետներ:

ՖՈՒՏԲՈԼ

Նեւիո Սկալան «Շախտյոր-ի» մարզչի թեկնածու

Ամենայն հավանականությամբ Դոնեցկի «Շախտյորը» նոր մրցաշրջանում կգլխավորի իտալացի հանրահայտ մարզիչ Նեւիո Սկալան: Ճիշտ է, Եվրոպայի լավագույն մարզիչներից մեկը դեռեւս պայմանագիր չի կնքել ուկրաինական ակումբի հետ, սակայն արդեն մի քանի օր գտնվում էր Դոնեցկում: Նա ներկա է գտնվել Ուկրաինայի գավաթի խաղարկության «Շախտյոր»–«Ստալ» հանդիպմանը:

Ընթացիկ մրցաշրջանում թիմը չկարացավ իր առջեւ դրված խնդիրները: «Շախտյորը» տանուլ տվեց չեմպիոնի կոչման համար մղված պայքարում, չկարողացավ մտնել չեմպիոնների լիգայի խմբային մրցաշար, ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում անհաջող հանդես եկավ: Արդյունքում գլխավոր մարզիչ Վիկտոր Պրոկոպենկոն հրաժարական տվեց:

Ինչ վերաբերում է Սկալային, ապա իտալացի մարզչի գլխավորությամբ «Պարմա» Եվրոպայում մեծ նվաճումների է հասել 90-ական թվականներին: Ճիշտ է, ոմանք պնդում են, որ «Պարմայի» «ոսկե դարը» սկսվել է ավելի վաղ՝ Արիգո Սակիից, որի ղեկավարությամբ թիմը Իտալիայի առաջնության «Բ» խումբ մտավ: 1989 թ. Սակին տեղափոխվեց «Միլան»՝ թիմը հանձնելով Սկալային: Վերջինիս գլխավորությամբ «Պարման» մտավ «Ա» խումբ, եւ սկսվեց թիմի հաջողությունների շարքը: 1990/91 թթ. մրցաշրջանում Սկալան ճանաչվեց Իտալիայի լավագույն մարզիչ: 1992 թ. «Պարման» դարձավ Իտալիայի գավաթակիր, հաջորդ տարի նվաճեց գավաթակիրների գավաթը: 1994 թ. գավաթակիրների գավաթի խաղարկությունում թիմը հասավ մինչեւ եզրափակիչ՝ նվաճելով սուպերգավաթը, իսկ հաջորդ տարի հաջողության հասավ ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում: Սկալան այնուհետեւ մարզել է Դորտմունդի «Բորուսիան»՝ թիմին դարձնելով միջմայրցամաքային գավաթի հաղթող: Չնայած դրան, ակումբում նրա գործերը լավ չընթացան: Անցյալ տարի նա «Բեշիքթաշի» մարզիչն էր:

Սկալան լավ տիրապետում է անգլերենին ու գերմաներենին: Այդ պատճառով էլ «Շախտյորի» ղեկավարությունը համոզված է, որ թիմը գլխավորելիս խնդիրներ չեն ծագի:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Կոնստանտին Ցզյուն աշխարհի բացարձակ չեմպիոն

Ռուսաստանցի պրոֆեսիոնալ բոնցքամարտիկ Կոնստանտին Ցզյուն Լաս Վեգասում կայացած մրցամարտի 2-րդ ռաունդում նոկաուտի ենթարկելով ամերիկացի Զաբա Զուդուին, նվաճեց կիսամիջին քաշում աշխարհի բացարձակ չեմպիոնի կոչումը: Ցզյուն ռուսաստանցի առաջին պրոֆեսիոնալ բոնցքամարտիկն է, որը հասնում է նման նվաճման: Արժե մարզասերներին տեղեկացնել, որ պրոֆեսիոնալ ռինգում ներկայում ելույթ են ունենում աշխարհի միայն 2 բացարձակ չեմպիոններ՝ միջին քաշային Բեռնարդ Հոպկինսը եւ կիսածանր քաշային Ռոյ Զոնսը:

«Այաքսը» հրավիրում է վան Բաստենին

Հոլանդական «Այաքսը» մտադիր է իր նախկին ֆուտբոլիստին՝ նշանավոր ոմբարկու վան Բաստենին հրավիրել որպես պատանեկան թիմի մարզիչ: Սակայն 36-ամյա ֆուտբոլիստը, որի ֆուտբոլային կարիերան ընդհատվեց ոտքի կոտրվածքի պատճառով, այլ ծրագրեր ունի: Վան Բաստենը ցանկանում է կրկին խաղադաշտ դուրս գալ որպես գործող ֆուտբոլիստ:

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Ադրբեջանցի մի գործարար հողամաս է գնել Հայաստանում

ԲԱՔՈՒ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Բաքվում լույս տեսնող «Մուխալիֆաթ» թերթը տեղեկացնում է, որ Ադրբեջանի ազգային անվտանգության նախարար Նամիկ Աբասովը, ելույթ ունենալով զազմագերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերի պետական հանձնաժողովի նիստում, հայտնել է, թե ադրբեջանցի հայտնի մի գործարար Հայաստանում հողամաս է գնել եւ «գործ դրել»:

Անունը, ըստ թերթի, նախարարը չի հայտնել, բայց ասել է, թե ադրբեջանցի ձեռներեցը Հայաստանում իր գործն սկսել է վերջին մի քանի ամսվա ընթացքում:

Նամիկ Աբասովը, ըստ նույն թերթի, իր ելույթներից մեկում խիստ քննադատել է ադրբեջանցի լրագրողներին, որոնք վերջերս այցելել են Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ: Նա պնդել է, թե նրանք Հայաստանում զբաղվել են հարբեցողությամբ եւ «դեբոշներ սարքել»:

Մի քանի օր առաջ նույն նախարարը պնդել էր, թե ադրբեջանցի լրագրողները Հայաստանում իրենց անպարկեշտ են պահել եւ անեկդոտներ պատմել Ադրբեջանի ղեկավարների մասին:

ASHJIAN TRAVEL & TOURISM
30 Years Tourism Experience
(1971-2001)

Անհավատալի ցածր գնով (399,5 ԱՄՆ դոլար) Սիրիայի եւ Լիբանանի ամենամեծ տոնավաճառներում առեւտուր եւ էքսկուրսիա 8 օրով (2-9 դեկտեմբեր, 2001 թ.)

Գները՝ երկտեղանոց համարում 2 անձի պարելու դեպքում 1 անձի գումարը կազմում է 399,5 ԱՄՆ դոլար:

1 անձը առանձին համարում ըստ իր ցանկության պարելու դեպքում՝ 700 ԱՄՆ դոլար:

Ծնողների հետ պարելու դեպքում մինչեւ 12 տարեկան երեխայի համար՝ 325 ԱՄՆ դոլար:

Գների մեջ ներառված են Լիբանանի եւ Սիրիայի մուտքի թույլտվությունների արժեքը, Երեւան-Հալեպ-Երեւան ավիատոմսերի արժեքը, Հալեպի օդակայանի հարկը, Հալեպի հյուրանոցի** եւ Բեյրութի նորակառույց հյուրանոցի**** գիշերավարձերը, նախաճաշերի եւ ընթրիքների արժեքը, Հալեպ-Բեյրութ-Հալեպ երթուղու ավտոբուսի արժեքը:

Ծանոթություն. Գնի մեջ չի ներառված «Զվարթնոց» օդակայանի ելքի հարկը՝ 10.000 դ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 538761 (հասցե՝ Երեւան, Ամիրյան 7, բն. 5):

Armex
Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2001 թ. նոյեմբերի 6-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Հայտ. ABBR	Հարթակ Listed	Գնում՝ Bid: Լավագույն գին Best price	Գնում՝ Bid: Միջ. կշռ. գին Avg. price	Գնում՝ Bid: Ընդհ. Total qnt.	Վաճառք՝ Ask: Լավագույն գին Best price	Վաճառք՝ Ask: Միջ. կշռ. գին Avg. price	Վաճառք՝ Ask: Ընդհ. Total qnt.	Կատարված գործարքներ Transactions: Ցածր գին Day low	Կատարված գործարքներ Transactions: Առավ. գին Day high	Կատարված գործարքներ Transactions: Միջ. կշռ. գին Avg. price	Կատարված գործարքներ Transactions: փոփ.% Avg%	Կատարված գործարքներ Transactions: Ծավալ (հազ. դրամ) Volume
ԱՊԱԿ-ԲԿՈՒՍԻՀ	APAK	B											
ԱՐԴՎԻՆ ԷԼ ՍԵԼ ԳՌ (ՎԱՆԱՁՈՐ)	ARDV	B											
ԱՐՇԱԼՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ	ASEV	B	1,000.0	1,000.0	1								
ԱՍՏԵԿԱՍՍԸ (ԱՐԹԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈՎԱՐԵՂԱՍՏԵՐԻ ԳՌ	AVAG	B	90.0	90.0	80								
ԱՎԻՇԱՄՍԼԻՐ	AVHM	B											
ԱՎՏՈԲԵՌԻՉ	AVTB	B	300.0	300.0	1								
ԱՎՏՈՄՍՏԻԿԱ ԳՌ	AVTM	B											
ԻՏԵԿՍԻ ԲԵՆՏՈՒՏ Կ/Տ	BENT	B											
ԲՀԵՍՊԼԱՅՍՍ	BHSP	B											
ՉԱՐԵՆՑ ԳՈՐԾԻՔԱՐԻՆ ԳՌ	CHGG	B											
ԿԱՊԻՏԱԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ	CPMT	B											
ԴԱԼԻՋԱՆԻ ԱՐՏ. ՁՐ ՄԿ	DAJK	B											
ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺԵԵՎ ԳՌ	DBJG	B											
ԴԱԼԻՋԱՆԻ ՍՈՎՈՂ. ՀՂ	DJAH	B											
ՉՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ	DZKT	B	400.0	400.0	20								
ԷԼԵԿՏՐՈԾԵԳՐԻՏՍՍՐՔ	ECHS	B											
ԷՋՄԻԱԾԻՆ ՍԱՐՔԱՇԻՆ ԳՌ	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԳՌ	EELJ	B											
ԵՐՋՐԵՋ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ. ՀԻԴՐՈՀԱԳՈՐԴԱԿ ԳՌ	EHHG	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՌ	EJWG	B											
ԵՐԿԱԹԵՏՈՆ-7	EKB7	B											
ԵՐ. ԿԵՆՏՐԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՌ	EKQG	B	400.0	400.0	100	900.0	900.0	33					
ԷԼԵԿՏՐԱՊՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՄՈՆՏԱԺ	ELMJ	B											
ԵՎԱՐԴԻ ՄԱՐԶԱԿԱՆՈՒԿՆԵՐԻ Ֆ/Ա	EMKFCO	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍԵՔՍՈՐ	EMQR	B											
ԵՄՏԱ	EMTA	B											
ԷՋՄԻԱԾԻՆ ՊԼԱՍՏԱՍ ԳՌ	EPLG	B											
ԵՐԱԶ	ERAZ	B											
ԵՐ. ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ԳՌ	ERJG	B	1,350.0	1,350.0	20								
ԵՐԿԱԹԵՏՈՆ	ERKB	B							500.0	500.0	500.0		83.5
ԵՐ. ՇԱՄՊԱՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՌ	ESHG	B											
ՄՍԱՀՏ ԾԵԼ ԳՌ (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B	1,000.0	1,000.0	16								
ՎԱՆ Ա/Ֆ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՌ - 1	EVGI	B											
ՄՆԻԿ	GANV	B											
ԳՈՐԻՍ ԳԱՄՄ	GGAM	B											
ԳԵՔԱՄՍ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐԻ ՄԱՍ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱՅԱԳՈՐԾԱՆԿ	HAGB	B											
ՀԱՇՎԻՉ	HASH	B	100.0	100.0	15,150								
ՀԱՏԻՍ	HATC	B											
ՀԱՅՕԽԱՆՈՍ	HATS	B	1,500.0	1,461.5	78								
Հ.Է.Ղ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	B											
ՀԱՅՔԻՄԻԵՔԵԼՍ	HQMQ	B											
ՀԱՅՔ ՇԻՆԱՆՅՈՒԹԻՆ	HSHN	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՄՈՒՐՋՇԻՆ	KMSH	B							100.0	100.0	100.0		13.2
ԿՆՆԿԱ	KNKA	B											
ՈՒԼԵ ԳՌ (ԿԱՊՈՒՏԻ)	KREL	B											
ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՌ	MQER	B	2,220.0	2,220.0	5								
ՄԱՐՏՈՒՆԻՇԻՆ	MRSH	B											
ՄԵՐՇՍՈՎԿՈՎՅԱՆ	MSKV	B											
ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	MSTB	B	400.0	400.0	10								
ՄԵՏՇԻՆ	MTSH	B											
ՆՈՒԲԱՐԱՇԵՏԻ ՏՐԻԿՈՏԱԺԻ Ֆ/Ա	NBTF	B											
ՆԵՏՐՈՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՌՍՏՐ ԳՌ	RSTR	B											
ՌԵԶԻՍՏՈՐ	RZTR	B											
ՍԵԼԵՆ	SELN	B											
ՇԻՆՄԵՔԵԼԱՆՈՐՈԳՈՒՍ	SHMN	B											
ԵՐ. ՇՈՒՐՃԱՆ ՏԵՔՍՏԻԼ Կ/Տ	SHTK	B											
ԿՍՏԱՐՈՂ ՍԱՐՔ ԳՌ	SKSG	B											
ՏՈՍՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐՇԻՆ	UKSH	B											
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆԱՁՈՐԻ ԿՈՇԻԿԻ Ֆ/Ա	VAKF	B											
ՎԱՆՇԻԿ	VSHK	B											
ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ ԳՌ	VTMG	B											
ԵՐԵՎԱՆ ԿԱՀՈՒՅՔ	YKHQ	B											
ԵՐ. ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՌ	YPHG	B											
ԵՐ. ՈՒԼԵԻ ԳՌ	YRLE	B											

* Շրջանառված գնանշումներ/ծավալներ/գործարքներ հայտերի մասին տեղեկություն առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները ՀՀ դրամով:
** 4 կետից կազմված հարյուրմեջ դիր թվանշանային ընկերության հասարակ անվանական բաժնետոմսի հարյուրմեջ է: Այն դեպքում, երբ 4 կետից բացի նշված է CO, արդյունքը ՍՊԸ-ի բաժնեմաս է:
Այլ տեղեկությունները հրատարակվում են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

ԲՀԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ է

ս. թ. նոյեմբերի 3-ին «Ազգ» եւ «Երկիր» թերթերում ԲՀԻՕՀՀՄ-ի 2002 թ. Զալցբուրգում կայանալիք բժշկական սեմինարների մրցույթի հայտարարության մեջ տեղի է ունեցել վրիպակ. դիմումների ընդունման ժամկետը 2001 թ. դեկտեմբերի 18-ն է՝ նշված մարտի 17-ի փոխարեն: Հավելյալ տեղեկությունների համար դիմել՝ Երեւան, Պուշկինի 1, բն. 2

Հեռ.՝ 542119, 541719, 543901
panaida@osi.am, www.osi.am

ԿՈՐԵԼ Է

Մարիետա Հրանտի Մեժլումյանի դիպլոմը (Ա-N 115940)՝ տրված Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի կողմից՝ 1972 թ.:

Ճանաչել անվավեր:

Հայտարարություն

Շտապ վաճառվում է ՎԱԶ 2106 մակնիշի ավտոմեքենա՝ 1985 թ. արտադրության, բարվոք վիճակում: Գինը՝ 900 ԱՄՆ դոլար: Հեռ.՝ (09) 429353, 537727

Երեւանի քաղաքապետարանը հայտարարել է աճուրդ Հյուսիսային պողոտայի՝ Թումանյան եւ Տերյան փողոցներին հարակից գոտում երկու հողամասերի վարձակալության պայմանագրի կնքման իրավունքի համար: Մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար համարժեք է 300 ԱՄՆ դոլարի: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել 559501, 400749, 563601:

Հյուսիսային պողոտայի հողամասերի վարձակալության պայմանագրերի բաց աճուրդի հրավեր

ՀՀ կառավարության 18.07.2001 թ. «Երեւանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրի իրականացման միջոցների մասին» թիվ 645 որոշմամբ հաստատվել է պողոտայի հատվածում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման՝ 72000 քմ ընդհանուր մակերեսով գոտին, որից 5600 քմ մակերես ունեցող հատվածում Երեւանի քաղաքապետին թույլատրվել է առանց մրցույթի, ուղիղ բանակցությունների միջոցով վարձակալությամբ տրամադրել հողամասեր: Վարձակալության ենթակա տարածքը բաժանված է չորս հողամասերի, որոնցից առաջին երկուսի համար անց են կացվել աճուրդներ եւ կնքվել են համապատասխան պայմանագրեր:

Երրորդ եւ չորրորդ հողամասերի վարձակալներին որոշելու համար Երեւանի քաղաքապետարանը հայտարարում է բաց աճուրդ: Յուրաքանչյուր հողամասի համար անց է կացվելու առանձին աճուրդ եւ կնքվելու է առանձին պայմանագիր:

Աճուրդի առարկան է՝ շենքերից եւ շինություններից ազատված եւ որեւէ իրավունքով չծանրաբեռնված համապատասխան հողամասի կառուցապատման նպատակով վարձակալության պայմանագրի կնքման իրավունքը: Վարձակալության պայմանագրերով նախատեսվում է կառուցապատման ավարտից հետո համապատասխան հողամասն ի սեփականություն ձեռք բերելու հնարավորությունը:

Աճուրդները կայանալու են համապատասխանաբար 2001 թ. նոյեմբերի 13-ին եւ 20-ին Երեւանի քաղաքապետարանի նիստերի դահլիճում, ժ. 18:00-ին:

Աճուրդներն անցկացվում են «Հարությունյան եւ գործընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի կողմից: Յուրաքանչյուր աճուրդ իրականացվելու է միեւնույն օրը «Եռափուլ կարգով» (@ 2001 Հայկ Հարությունյան եւ Վահան Հարությունյան) ըստ հետեւյալի.

*Առաջին փուլ. Փակ ծրարներով հայտերի ներկայացում, հաղթողը նախապատվության իրավունք է ստանում աճուրդի երրորդ փուլում,

*Երկրորդ փուլ. Բարձրաձայն դասական աճուրդ, որի մեկնարկային գինը սահմանվում է առաջին փուլի առավելագույն հայտի գումարի չափով,

*Երրորդ փուլ. Աճուրդի առաջին փուլի հաղթողն, իր հայեցողությամբ, համաձայնվում է վճարել աճուրդի երկրորդ փուլի առավելագույն հայտի գումարը եւ ճանաչվում է աճուրդի հաղթող, կամ զիջում է աճուրդի երկրորդ փուլի հաղթողին:

Աճուրդի հայտերը ներկայացվում են ԱՄՆ դոլարի համարժեքով՝ հողամասի մեկ քմ-ի հաշվարկով: Աճուրդի մեկնարկային գինը սահմանվում է 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով:

Շահագրգիռ անձինք կարող են մասնակցել աճուրդին՝ վճարելով երաշխիքային նախավճարը՝ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով, մինչեւ համապատասխան աճուրդի օրվա բանկային ժամերի ավարտը (16:00): Վճարումները կատարվում են էսֆրոու գործակալ HSBC բանկ Հայաստան ՓԲԸ-ում բացված «էսֆրոու» (հատուկ դեպոզիտ) հաշիվներին: Փակ ծրարներով հայտերը կարող են ներկայացվել՝ դրանք մինչեւ համապատասխան աճուրդի անցկացման օրվա ժ. 17:00-ը՝ Երեւանի քաղաքապետարանի նախասրահում գտնվող զմռսված տուփի մեջ գցելու միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել «Հարությունյան եւ գործընկերներ» իրավաբանական գրասենյակ՝ ք. Երեւան, Խանջյան 50, Թեթեոյան կենտրոն, IV հարկ, հեռ.՝ 559501, 559502, բջջ. 400749, էլ. փոստ՝ auction@legal.am, կամ Երեւանի քաղաքապետարանի «Հյուսիսային պողոտա եւ կասկադ» ծրագրերի իրականացման գրասենյակ, հեռ. 563601:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 6. 11. 2001 Գինը՝ 100 դրամ